

Հայկական
Այրումներ

Armenian Impressions

Յրատարակված է
Published by





© & © K Telecom CJSC

ISBN # 978-99941-2-097-0

«Հայեցի ապրումներ», մաս Երկրորդ, Երևան, 2007, 160 էջ
«Դիմք Քոմյունիքեյնզ» գովազդային գործակալություն

«Հայեցի ապրումներ» գրքի Երկրորդ մասը հայոց մշակութային և
ճարտարապետական ութ կոթողների մասին է: Այն ներառում է
պատմական, ճարտարապետական, հնագիտական հոդվածներ և
համեմված է ժողովրդական ավանդապատումներով:

Գիրքը հրատարակված է «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի պատվերով և
նախատեսված չէ վաճառքի համար:



«ՎիվաՍել» «ՍՏՍ» ԲԲԸ ("MTS" – NYSE: MTS)
դուստր Ժեղնարկությունն է:

Գրքում ընդգրկված բոլոր հոդվածներն ու լուսանկարները
պաշտպանված են հեղինակային իրավունքներով: Դրանց ապօրինի
վերահատարակումն առաջացնում է պատասխանատվություն՝ ՀՀ
օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայկական
Աստվածական

Armenian Impressions

Յրատարակված է
Published by





Հարգելի բարեկամ,

ՎիվաՍելը, հավատարիմ մնալով իր որդեգրած սկզբունքներին, շարունակում է աջակցել Հայաստանի սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտական և կրթական կյանքի զարգացմանը և հաճույքով մասնակցում այն նախաձեռնություններին, որոնք ուղղված են այդ կենսական ոլորտներին: Այս երիտասարդ հանրապետությունը դեռևս բարգավաճման ու հաջողությունների դարեր ունի առջևում: Այս գիրքը մեր ժողովրդի կերտած հիմնարար արժեքներին ևս մի անգամ անդրադառնալու, դրանք նորովի ներկայացնելու և վերահմաստավորելու փորձ է:

Մենք մեր նախնիներից ժառանգել ենք փառավոր մշակութային հուշարձաններ, հիմասքանչ ճարտարապետական կոթողներ, բազմազան ու գեղատեսիլ բնաշխարհ: Մենք ոչ թե պարզապես պետք է հիմնանք ու հայրտանանք այդ ժառանգությամբ, այլ գիտակցենք դրա արժեքն ու պահպանենք ամեն օնութեալ: Դա մեր ազգային հարստությունն ու զանձն է, որ դիմանալով դարերի ավերիչ փորորիկներին, հասել է մեզ, անսասան հիմք դառնալով մեր ազգի, նրա ուրույն դիմագծի ու արժանապատվության պահպանման համար, որը նաև նրա անկոտրություն կամքի ու մշտապես արարելու ձգտման վառ արտահայտությունն է: Մենք պետք է ամուր կառչենք և հավատարիմ մնանք մեր հավատքին, մշակույթին, ինքնությանը. չուրանանք և չդաշտանենք դրանց, քանզի դրանք են մեր հավերժության ճանապարհի պաշտպան վահանները:

Մեր սոցիալական աջակցությունները, հաստկապես հայ մշակույթի խրախուսման բնագավառում, ապացուցում են, որ մենք հաստատական ենք մեր ժողովրդի ստեղծագործական գործընթացին սատարելուն: ՎիվաՍելը շարունակելու է այն ազգանպաստ աշխատանքը, որ կոչվում է հայրենի մշակույթի, հոգևոր արժեքների գնահատում և վերարժելում: Հայերն երբեք չեն մոռանա իրենց արմատները, որի հզոր հիմքի վրա յուրաքանչյուրս կառուցում է իր սեփական Հայեցի ապրումները:



Dear Friend,

Adhering to its principles, VivaCell continues to support the development of Armenia's socio-economic, cultural, scientific and educational life and gladly partakes in initiatives focusing on these essential domains. This young Republic has a prosperous and thriving centuries ahead. This book is an attempt to revisit, reintroduce and revitalize the fundamental values which have shaped our nation. We must learn from our ancestors who have known how to build an ever-lasting nation and transcend that wealth to our children.

We have inherited glorious cultural shrines, magnificent architectural institutions, a diverse and beautiful wildlife. We mustn't simply admire and take pride in it, but learn their value as well as preserve and safeguard. This is our capital, our treasure that has transpired to us through the most difficult chapters of our history during the course of thousands of years. They are the pillars of our existence. We should stand firmly by our faith, culture, and identity, not to deny or betray them. They are the shields of our journey to an eternal Armenia.

Our social contributions, especially in the promotion of the Armenian culture attest to our profound determination in supporting the creative process of our people. VivaCell is dedicated to continue promoting all efforts to building a strong nation based on esteemed cultural and profound values. Armenians never forget their roots, that mighty foundation on which every one of us builds his/her own Armenian Impressions.

Ռալֆ Յիրիկյան
ՎիվաՍելի Գլխավոր Տնօրին

Ralph Yirikian
General Manager, VivaCell

ա բ գ դ ե զ է ն թ
Ժ ի ւ ի ս ծ կ հ ձ դ
Ա յ ն շ ո չ պ շ ո ւ
Վ պ ր ց ո ւ փ ք օ ֆ

Հայիստրան

Բնավ պատահական չէ, որ Հայաստանն անվանում են նաև «թանգարան՝ բաց երկնքի տակ»:

Իրապես, մեր երկրում կարելի է հանդիպել հազարավոր կորողների, որոնք իրենց մեջ կրում են ստեղծագործ հայ մտքի թռիչքն ու վեհությունը, իհացնում ու զարմացնում իրենց հրաշակերտ խորհրդավորությամբ: Սակայն դրանց մեջ առանձնանում են մեր ժողովրդի կողմից արարված այդպիսի անկրկնելի գլուխգործոցներ, որոնք մշակութային մեծագույն արժեքներ լինելուց բացի՝ մեր ժողովրդի համար ունեցել են նաև պատմական, քաղաքական, կրթական, գիտական ու հասարակական մեծ կարևորություն, և անգնահատելի դեր են խաղացել մեր ժողովրդի զարգացման դարավոր ճանապարհին: Դրանք մեր հայեցի ապրումներն են:

Այս գրքում ներկայացվում են այդպիսի ուր կորողներ, որոնցում, մեր համոզմանք, ակնհայտ է վերը նշված հատկանիշների մեջ մասը: Դժվար է եղել ընտրությունը: Երկար մտորումներից ու ուսումնասիրություններից հետո ընտրվեցին հետևյալ կորողները՝ Ուլղասապ, Զորաց քարեր, Գեղարդի վանք, Խոսրովի անտառներ, Սանահինի վանք, Սմբատաբերդ, Խնձորեսկ և Տաթևի վանք, հաշվի առնելով դրանց հնագիտական, ճարտարապետական, պատմական ու մշակութային նշանակությունը, ներդաշնակությունը շրջակա բնության հետ, Վերոհիշյալների մասին պատմվող առասպելները, զարմանահրաշ պատմությունները, որոնք ժողովրդական բանահյուսության հիմանալի նմուշներ են:

Preface

It is not by coincidence that Armenia is also known to be a museum under the open sky.

Indeed, one can encounter thousands of monuments in our country, incorporating the essence of the creative Armenian mind, which mesmerizes with its divine magnificence. However, there are some exceptional masterpieces created by the people of this land which cannot be reproduced. Besides harboring mystical and cultural values, over centuries they have each played a vital historic, political, educational, scientific or social role in the advancement of our people. These are our Armenian Impressions.

With this book, we present eight such shrines, which we believe contain many of the attributes mentioned above. The selection process was a difficult one. After much consideration and research, the following sites were chosen: Ughtasar, Zorats Karer, Geghard Monastery, Khosrov Forests, Sanahin Monastery, Smbataberd, Khndzoresk, and Tatev Monastery.

These genius achievements are acknowledged based on their archeological, architectural, historic and cultural significance, as well as their harmonious integration with surrounding nature. They all offer much appreciated popular folk tales and legends.




Բայուսմանկանքներ

Table of Contents

Ուղտասար Ughtasar	2
Զորաց Քարեր Zorats Karer	18
Գեղարդի վանք Geghard Monastery	34
Խոսրովի անտառ Khosrov Forests	50
Սահանին վանք Sanahin Monastery	66
Սմբատաբերդ Smbataberd	82
Խնձօրեսկ Khndzoresk	94
Տաթևի վանք Tatev Monastery	110





«Աւշտասար»

{ Ughtasar }



Չորս Ուժաւոր

Mighty Ughtasar

Ֆարերի երկիր Հայաստան... Մեր քարերում է գաղտնագրված հայոց գենետիկ ժառանգության պատճությունը:

Հաղթահարելով դժվարանցանելի ճանապարհը և հասմելով Սյունիքի բարձրավանդակի կենտրոնական հատվածում՝ գտնվող Ուղտասար՝ անմիջապես հայտնվում են նախապատմական ժամանակներում՝ հաղորդակցվելոյ նախնադարյան մարդու աշխարհի, նրա ծննդաբանական և առասպելաբանական պատկերացումներին:

Ժողովուրդը վայրն անվանել է Ուղտասար՝ Աև և Ալ լեռի միջև ընկած լեռնային տեղանքը սապատավոր ուղիով նմանեցնելու պատճառով։ Պատմում են նաև, որ ժամանակին լեռան լանջին ուխտավորները զոհաբերել են իրենց որսը, ապա այն պատկերել քարերի վրա, իսկ նախքան զոհաբերության արարողությունը երկար և դժվարին ճանապարհ անցնել, մինչև զոհ մատուցելը՝ մարմնով մաքրվել Ուղտասարի լճերում²։ Իրականում Ուղտասարը ոչ միայն զոհատեղի է, այն նաև նախնադարյան ժամանակների մարդկանց ասոցիատիվ, պատկերավոր և գեղարվեստական մտածողության արգասիքն է, նրանց աշխարհներման, հոգեբանության, հավատալիքների և հմայությունների սրբառեղի

ARMENIA: THE COUNTRY OF STONES! Forever preserved on these stones is the genetic heritage of Armenia's people.

Overcoming mountains and a complete lack of roads, one reaches the heart of Syunik's plateau¹, feeling transported in time to prehistoric man's world and understanding them through their drawings, as if reading an ancient epic poem. This site is called Ughtasar.

This mountainous region between the Black (Sev) and Scarlet (Al) lakes has a clear resemblance to camel humps, which is why they bestowed it with the name "Ughtasar" (ught is the Armenian word for camel and sar means mountain). It is not by chance that prehistoric people chose this particular site. Legend says that hunters sacrificed their prey, and later drew this scene on stones. Prior to these rituals, the hunters traveled the long and difficult road leading to these fields, and therefore, had to wash themselves in Ughtasar's lakes². In reality, Ughtasar is not only a place for sacrifice, but also where prehistoric man developed associative pictorial and artistic thinking. It is the collective portrayal of their



Ընտանեկան այծեր (վերև)
Ժայռափոր այծեր (ներքև)

Domesticated goats (above)
Stone art of goats (below)

PHOTOS BY HRACHIA GHAZARYAN

«Քարեղարան» է բաց երկնքի տակ:

Այսօր ժայռապատկերների գոյությունը հաստատագրված է աշխարհի ավելի քան 120 երկրներում: Հայաստանում կան աշխարհագրական 5 տարածքներ, որտեղ հաշվում է ընդհանուր թվով քանի հազար ժայռապատկեր, որից ավելի քան վեց հազարը գտնվում է Սյունյաց Ուղտասարում³:

Ժայռապատկերները թվագրվում են մ.թ.ա VII հազարամյակով և ավելի հին ժամանակներով: Մինչ օրս առեղծվածային է այն հանգամանքը, որ եթե նոր ժամանակներում փորձ է արվում ննանակել ժայռապատկերների գծանկարները, ապա կրկնօրինակվող քարերը բորբոսնում են, ի տարրերություն մ.թ.ա VII-I հազարամյակի վաղեմություն ունեցող ժայռագրերի:

Սյունյաց գետնատարած ժայռապատկերները դրոշմված են մուգ, արևահար մակերես ունեցող անդեգիտերազալտեր⁴ լավային մակերեսներին: Փորագրման տեխնիկական սկզբունքները հազարավոր տարիներ ի վեր անփոփոխ են մնացել: Նախնադարի ընդգրկուն գաղափարաբանությունն արտահայտելու համար ժամանակի արվեստագետներն ընտրել են սիմենտիկ, պայմանական ձևերը, արվեստի ընդհանրացված, վերացրակված, խորհրդապաշտական լեզուն: Նրանք պետք է սիմվոլների՝ պատկերագրերի և նշանագրերի միջոցով սերունդներին պատմեն իրենց կենսագործունեության բոլոր կողմերի մասին: Եպիկական պատմողականության լավագույն արտահայտչածները կարող են ոճավորված, արստրահարված պատկերները լինել, որոնցում նատուրալիստական ձևերի միտունավոր խեղմանք ստեղծվում էին էքսպրեսիվ և դինամիկ կերպարներ: Ժայռապատկերները միասնական ոճի մեջ պատմում են նախնադարյան բնապաշտնախույզի

perception of the world and the open-air sacred repository of their psychology, beliefs and divinations.

Rock art have been discovered in more than 120 countries around the world. There are 5 areas in Armenia with a total of 20,000 petroglyphs of which more than 6,000 are found in Syunik's Ughtasar³. These depictions date as far back as 7,000 B.C. In contrast to this rock art, which has survived thousands of years, when attempts are made today to duplicate these carvings, the stones simply deteriorate.

The petroglyphs of Syunik are inscribed on volcanic basalt⁴ boulders, darkened by the sun. The technique used for these depictions has remained constant over the centuries. To represent the overall prehistoric ideology, the artists of the time chose graphic forms of representation, using the abstract and symbolic language of art. Utilizing the universal symbolic language of drawings, they taught future generations all the different aspects of their daily lives and rituals. The narratives are depicted as stylized, abstract, and dynamic figures far from naturalistic representation. The general style of these petroglyphs demonstrates prehistoric man's observations and imaginative notions of their universe. These graphic drawings illustrate the developing thought process of prehistoric man, creating a new kind of language to communicate his history, record ideas related to the universe, and portray interpretations of emotions. The same art forms were used in medieval art and more recently in Avant-garde circles.

Traditionally, rock images have been considered as immortalizing prophesized ritualistic scenes of the hunter's success. However, some researchers believe that

...ուժգիւ Կայծակի ու
աւարտաների Ժամանակ
այծ Պարագայ է Կոջորո-
ւար ու քարտում,
պյուղիսով ու Վրա
Կրելով Հարգածը՝ Իրու
բնական Շաւարգել...



Եպիկական պատմողական արտահայտչածներ | Petroglyphs recounting epic stories

Դիտարկումների և երևակայության խորհրդավոր աշխարհի մասին։ Գծանկարային ժայռապատկերները նախնա-դարյան մարդու նկարելու ամկարողության արգասիքը չեն, այլ նրա մտածողության առաջնաբացի հավաստիքը, քանի որ սեփական աշխարհայացքը նյութականացնելու համար նա ստեղծում է արվեստի նոր լեզու՝ վերացարկումը, արտահայտելու համար իր զգայական ներաշխարհը և համատիեզերական պատկերացումները ճիշտ այնպիսի արտահայտչածներով, ինչպիսիք որդեգրվում են միջնադարյան արվեստի, ապա ավանդարդիստական ուղղությունների ձևաստեղծումներում։

Ավանդարար ժայռապատկերները համարվել են որպիս ժամանակ հաջողությունների հասնելուն ուղղված ծիսամոգական տեսարաններ՝ ամրագրված

prehistoric reasoning may not have been evolved enough to express such elaborate ideas. Nevertheless, isn't it true that man was most in tune with nature during the prehistoric era? Therefore, it may very well be that the source of inspiration of petroglyphs seems to be the desire to discover the world and transcend such experiences by immortalizing them on these stones. Other sources of inspiration are ritualistic prophesizing though which they invited the generosity of nature by means of supernatural activities.

It's fascinating that the vast majority of Ughtasar's petroglyphs are images of goats. At the mention of rock art in general, the words "aytsagrer" and "itsagrer" (goat script) are common. What reasoning is attributed to the domination

DURING A LIGHTNING STORM, ONE GOAT WOULD EXTEND ITS HORNS, AND TAKE ON THE ROLE OF A NATURAL LIGHTNING ROD.

«Ուշտասար»

Ուշտասարի ժայռի պատկերից
մի հատված, 1985թ.

Fragment of a stone art at
Ughtasar, 1985



բարձրեկորների վրա: Գիտնականների մի խումբ հակված է համարելու, որ նախնադարյան մտածողությունը բավականին պարզունակ էր նման խորը գաղափարներ արտահայտելու համար, սակայն մարդոց երեք այնքան կապված չի եղել բնությանը և երկնքին, ժամանակի պարբերաշափօ ամրագրելու և կյանքը կանոնակարգելու անհրաժեշտությանը, որքան նախնադարյան ժամանակներում: Յետևարար, ժայռապատկերների ներշնչման աղբյուրը նախնադարյան ճանաչողության փափազն էր, կուտակած կենսափորձը հավերժացնելու միտունը, բնախույզի պատկերավոր երևակայությունը, իրական դիտունների վրա հիմնված բնապատճենությունը, նաև ծիսական հմայությունը, համաձայն որի, բնության բարեհաճությանն արժանանալու համար հարկավոր էր գերինական ուժերի միջոցով ազդել նրա վրա:

Երբ խոսք է գնում, որ Ուղտասարի պատկերներում հաշվում են մի քանի հազար կերպարներ, ապա առաջին հայացքից թվում է, թե դա պարզապես մտացածին խարկանք է: Սարդիկ գծանկարներում տեսնում են այն, ինչ ցանկանում են տեսնել: Սակայն պատկերամոտիվների հիմնական դասակարգմանը հասկանում ենք, որ գործ ունենք ամենակի էլ ոչ պատահական համընկնումների ու պատկերագրական մոտիվների հետ:

Յետաքրքրականն այն է, որ Ուղտասարի ժայռապատկերների գերիշխող մեծամասնությունը կազմում են այժերի պատկերները, իսկ ժայռապատկերների համար շատ տարածված է «այծագրեր»

of animal inscriptions? How does the name relate to them? The slender shaped Bezoarian goat, typically found in Armenia's mountainous areas, has been a topic of prehistoric studies by naturalist researchers. What's more, the animal has the ability to produce bezoars (healing stone) in its stomach.⁵ Prehistoric man noticed some of the extraordinary behavior among goats in the herd. During a lightning storm, when the herd is in disarray, one goat will climb the highest rock, extend its horns, and immobilize itself, thus taking on the role of a natural lightning rod. Goats are particularly frequent in Ughtasar's depictions of hunting scenes and are the collective symbol of small horned animals. The goat is also the animal emblem of God's spirit and symbolizes the concept of God.⁶ Therefore, goat carvings are interpreted as divine hieroglyphs as well.

Studying Armenian and international mythology, today researchers attempt to turn back time and interpret these petroglyphs, to better understand the world perceptions of the ancient man.


If the rock carvings are studied more closely, scientists may well be able to demonstrate that the goat inscriptions are not simply images of mystical hunting scenes, but hold much greater meaning and symbolism. In that case, perhaps we will know a great deal more about our predecessors' perception of the world and its creation. ☩

Սյունիաց գետնատարած ժայռապատկերները դրոշմված են մոլց, արևահար մակերես ունեցող անդեմիտ-բազալտ լավային մակերեսներին (ձախից), կայծակը պատկերում են մարդիկ, ում մատները մեծ արտահայտչականությամբ ոճավորված, ընդգծված են լայնասիրու ճառագայթներով (աջից):

The petroglyphs of Syunik are inscribed onto volcanic basalt boulders darkened by the sun. (left); Prehistoric Nature worship observations (right).



PHOTOS BY RAFFI KOJIAN



{ Ապահարար Ժայռադատկերները
Համարվել են որսի Ժամանակ
Հաջողությունների Հասնելուն
Ուղղված Ծիսամոգական
Տեսարաններ՝ Արագորված
Քարաքեսորների Վրա:



TRADITIONALLY,
ROCK IMAGES HAVE
BEEN CONSIDERED AS
IMMORTALIZING PROPHESIZED
RITUALISTIC SCENES OF THE
HUNTER'S SUCCESS.

Բաժանմունքներ

Նախնադարյան մարդու Ուղտասարի ժայռապատկերներում ներկայացնում է իր համար ամենակարևոր երևույթներն ու իրերը:

- 1 Լուսի մշտնջենական աղբյուր լուսատուների՝ արևի, լուսնի, աստղերի և աստղագիտական՝ մոլորակների և համաստեղությունների, նաև կայծակի շաբարձակ պատկերախմբերը, իրենց կենդանական կցորդներով և սիմվոլներով⁵:
- 2 Օրացույցների, քարտեզների, կողմնացույցների և ժամացույցների⁶ պատկերներ, քանի որ ժայռապատկերների, ինչպես նաև Զորաց քարերի համալիրի շնորհիվ նախնադարյում առաջնահերթություն էր աստղային երկնքի լուսատուների շարժումներին և ժամանակի պարբերաչափին հետևելն ու տեղանքում կողմնորոշվելը:
- 3 Կենդանական աշխարհին,⁷ որսին, անասնապահությանը, կենդանիների ընտելացմանը, երկրագործությանն ու պտղաբերությանը, արհեստներին ու առևտուրին, զանազան գիտություններին նվիրված թեմաներ, որոնք մատնանշում են նախնադարյան մարդու կացութաձևի լուրջ փոփոխությունների իրողությունը⁸:
- 4 Կյանքի ծագման, աշխարհաստեղծման⁹, նախասկզբնական քառսից լուսի անջատման, հակադրությունների հավերժ պայքարի, ամպրոպամարտիկ դյուցազունների, հերոսների, երևակայական մարդկանց ու կենդանիների նասին առասպելաբանությունը և նախնադարյան դիցաբանությունը¹⁰:
- 5 Հայկական այբուբենի տառերին շատ մոտ նշանագրեր, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ հայկական, և ոչ միայն հայկական, հիերո-



գլիֆների, գաղափարագրերի, նշանագրերի և այբբենական գրերի համար նախատիպեր կարող են համդիսանալ Հայկական բարձրավանդակի ժայռապատկերները¹¹: Այս մոտեցումն, իհարկե, այսօր վիճարկվում է, սակայն նմանություններն ակնհայտ են, տեսանելի:

Ժայռապատկերներում կան նաև

- 6 Թվերի և երաժշտական (խազեր) նշաններ¹²,
- 7 ծիսական պարերի, երոտիկ և սրբազն պոռնկության տեսարաններ,¹³:
- 8 հասարակական հարաբերություններ, մայրություն և ընտանիք¹⁴:

Ժայռապատկերների կերպարները էքսպրեսիվ շարժման մեջ | Petroglyph images in expressive movements




PHOTO BY HRACHIA GHAZARYAN

Classifications

Upon hearing of thousands of petroglyphs at Ughtasar, one might suspect the figure to be an exaggeration. However, once categorized and carefully studied, it becomes clear that the large number of drawings are not mere coincidences but symbols that represent the most significant phenomena and ideas of the prehistoric man.

- 1** The worship of eternal sources of light: the sun, the moon, the stars, planets and constellations as well as images depicting gods of lightening—all of which also possess their animal symbols⁷ such as birds, horses, and so on.
- 2** Calendars, maps, orientation and sun dials:⁸ with the assistance of such calendars and maps at Ughtasar, and with the observations from Zorats Karer (Mighty Stones) dating to the same period, one of the priorities of the prehistoric era was the forecast of events and their orientation in time and space.
- 3** Themes related to animals and wildlife:⁹ hunting, animal domestication and husbandry, crafts and trade and various forms of sciences that demonstrate the realities of prehistoric life.¹⁰
- 4** Mythology of the beginning of life¹¹ and the big bang: the separation of light from chaos, eternal conflict of opposite forces, heroes and legendary superheroes.¹²



PHOTO BY HRACHIA GHAZARYAN

Հայն քազված մատներ, որոնք խորհրդանշում են լույսը
Extended fingers symbolize lightening.

- 5** Pictograms and Ideograms: several symbols closely resemble characters of the Armenian alphabet. Given the obvious likeness, Armenian rock art might have been the primary source¹³ and served as the archetypes for the creation of not only Armenian hieroglyphs, ideograms and letters but other ancient scripts as well.

Also included in these Petroglyphs are:

- 6** Numbers and musical symbols,¹⁴
- 7** Scenes of erotic-holy ritual dances,¹⁵
- 8** Social strata and relationships: motherhood and family.¹⁶



PHOTO BY ZAVEN SARGSYAN

կամ «իծագրեր» անվանումը: Ինչո՞ւ և ինչի՞ հետ է կապված կենդանիների քանակության նման գերակայությունը և անվանման բացատրությունը: Բեզուարյան այծը մշտապես նախնադարյան բնախույզի դիտումների տեսադաշտում գտնվող, հայկական լեռնաշխարհում տարածված սլացիկ, գեղեցիկ կենդանին էր: Այն ունի նաև իր ստամոքսում բուժական բեզուարներ ստեղծելու ունակություն¹⁵: Նախնադարդը հասցրել էր նկատել հոտի մեջ եղած այծերի վարքի դրսւորման զարմանալի այն առանձնահատկությունը, որ ուժգին կայծակի ու անձրևների ժամանակ, երբ հոտի մեջ խուճապ է առաջանում, այծը բարձրանում է ժայռի ամենաբարձր գագաթը, պարզում եղջուրներն ու քարանում, այդպիսով իր վրա կրելով հարվածը՝ իբրև բնական շանթարգել: Այժերը հատկապես տարածված են որսի տեսարաններում և հանդիսանում են մասն եղերավոր անասունների հավաքական սիմվոլները: Այծը ժայռապատկերներում հանդես է գալիս նաև որպես Աստծո-աստվածային Ոգու կենդանական խորհրդանշամ և Աստված գաղափարի արտահայտիչ¹⁶:

Յետևաբար այծագրերը մեկնաբանվում են նաև որպես աստվածային զորաց պատկերագրեր:

Այսօր, իմանալով հայ և հանաշխարհային առասպելաբանությունը, փորձ է արվում դրանց միջոցով գալ սկզբին, այսինքն՝ ընթերցել և մեկնաբանել ժայռապատկերները, հասկանալ նախնադարյան մարդկանց աշխարհընկալումը: Միգուցե այդպես ծիշտ չէ՝ Բայց չէ՝ որ բոլոր ժամանակներում մարդ արարածը աշխարհի, կյանքի ծագումնաբանության, բնության և տիեզերքի երևույթները զգայական մակարդակում ընկալել է գրեթե միաւնեսակ...

Եթե ժայռապատկերներն ավելի մանրակրկիտ ուսումնասիրվեն, ապա գիտական մոտեցումները կարող են նաև ցույց տալ, որ այծագրերը զուտ որսորդական մոգության պատկերներ չեն: Եվ այդ ժամանակ գուցեն շատ ավելի մանրանամեր կիմանաճք նախնայց աշխարհընկալման և ծննդոց պատմության մասին: 

Անտառային Ֆլորա

Ancient Rituals

Յուրաքանչյուր տարի Նավասարդի օրը, որն ըստ հին հայկական ավանդության նշվում էր օգոստոսի 11-ին և որը եղել է հին հայերի կարևորագույն տոներից մեկը՝ հին Նոր տարին, նշվում է տվյալ տոնակատարությունը։ Ինչո՞ւ է նշվում այս օրը։ Քանզի օրը երկար է, քամիները՝ քիչ, և մարդկանց՝ տոնակատարությանը ներկա լինելու հավանականությունը՝ բավականին մեծ։

Տոնակատարության նպատակն այն է, որ ժամանակակից արվեստագետն իր ուրույն մոտեցմամբ փորձում է ցույց տալ տարբեր երկրների առաջելները, որոնք ունեն մեկ ելակետային հիմք՝ Բարելոնի աշտարակը։

Traditionally, based on the old Armenian calendar, the most important and favorite holiday of the Armenians, the Old New Year, was celebrated on August 11th. One Artist, Ashot Avagyan, has revived this ritual by organizing performances inspired by this ancient celebration. And why celebrate this particular hilday? Because the day is long, the winds are wound down which is a perfect setting to get a large crowd to attend.

The purpose of this performance is to create a platform for the artist to reinact his perspective of legends from different opultions and civilization, which in his opinion have a common link, the tower of Babel.





© JACOB MAJARIAN



Ներկայացման
արվեստի նմուշների
հեղինակն է
Աշոտ Ավագյանը
Art work samples
from the ritualistic
performances.
Courtesy
Ashot Avagyan







« Արյաց Բայրկը »

{ Zorats Karer }



ԶՈՐԱԾ ՔԱՐԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՎԱՆԴԱՆԸ

Zorats Karer, the Mighty Necropolis

Էրևանից 200 կմ հեռավորությամբ, Սիսիան քաղաքից 3 կմ հյուսիս-արևելք, Որոտան գետի Դար վտակի ձախ ափին տեղակայված սարահարքում¹⁷ է գտնվում մի յուրօրինակ ու խորհրդավոր հնավայր: Հատկապես վերջին ժամանակներս այն դեպի իրեն է ձգում բազմահազար այցելուների՝ նրանց գրավելով նախ բնության և մարդու՝ անձեռակերտի ու ծեռակերտի ներդաշնակությամբ, ապա և անհաջ ցանկությամբ՝ հասկանալու, թե իրականում ինչ են իրենցից ներկայացնում առաջին հայացքից ոչինչ չասող մեգալիթները (հունարեն μεγασ-մեծ, λιτοσ-քար բառերից):

Հնավայրը նախնադարյան կրոմեխ է¹⁸, որը հնագետների կողմից մեկնաբանվում է իրու դամբարանադաշտ: Շուրջ 223 բազալտ մենաքարերը որոշակի տրամաբանությամբ և հասուկ շրջանի տեսքով ուղղահայաց դասավորված են 7-8 հա գրադեզնող տարածքում: Քարերը բերվել են մոտակա Դար գետի ծորի քարհանքից, բարձրացվել ու կամբնեցվել հյուսված պարաների և, հավանաբար, լծկան կենդանիների միջոցով: Անմշակ կամ թերևակի մշակված քարերի բարձրությունը տատանվում է 1.5-2.8 մետրի, իսկ կշիռը՝ 1.5-8.5 տոննայի սահմաններում: Որոշ

At a distance of 200 kilometers from Yerevan and 3 kilometers northeast of the town of Sisian, on a plateau¹⁷ above the left bank of the Dar, a tributary of the Vorotan river, there is a spiritual archeological site. Recently, this site has drawn the attention of many, attracted by its prehistoric mystery, wishing to observe and understand the megaliths known as Zorats Karer (in Greek, μεγασ-mighty, λιτοσ-stones).

This magnificent ground amidst the Sisian Mountains is a prehistoric cromlech,¹⁸ which has been interpreted by some archeologists to be a exceptional graveyard. About 223 free-standing basalt stones are placed in a circular pattern spread on an 8 hectare field. The stones were brought from a quarry in the cliffs of the river Dar, they were hoisted and erected using braided ropes and perhaps some animals. The height of these crude or slightly worked stones is between 1.5 and 2.8 meters, while the weight varies from 1.5 to 8.5 tons. Some stones have holes 4 – 5 cm in diameter, located about 10 – 20 cm from the top of the stone. One theory is that the apertures are there for tying ropes during transport and installation. Careful observation shows however that the holes



© JACOB MAJARIAN

Ըստ ժողովրդական լեգենդի՝ մենիքները քարացած կանայք և աղջիկներ են, որոնց դիաչելիս թշնամիները մահացել են:

A popular legend claims that the menhirs are a group of girls and women turned into stone, and upon touching them the enemy troops would die.

Քարեր զագարից 10-20սմ ներքև ունեն 4-5 սմ տրամաչափով անցքեր: Ըստ որոշ գիտնականների՝ այդ անցքերն արված են քարերին պարաներ կապելու և դրանք տեղափոխելու համար: Սակայն ուշադիր դիտելով կարելի է նկատել, որ անցքերն ուղղակի չեն փորվել, այլ արված են հատուկ խնամքով, մաքրությամբ ու ճշգրտությամբ: Ուշագրավն այն է, որ համալիրի 223 քարերից 84-ի անկյունները յուրօրինակորեն ուղղված են տիեզերքի տարրեր կետերին և երկնային լուսատուների որոշակի դիրքերին: Այս պարագայում ի հայտ է գալիս այն նոտեցումը, որ հնարավոր է՝ հնավայրի քարերը ոչ թե պարզապես ընդարձակ դամբարանադաշտի մահարձաններ են, այլ միգուցե երկնադիտական յուրօրիհանակ սարքավորումներ:

Ժողովրդի շրջանում երկար ժամանակ համարվել է, որ քարերի շարքն իրենից ներկայացնում է հինգ գերեզման, տաճարի կամ էլ պարսպապատի ավերակ:

Հնավայրում կա 17 քար՝ Արև, և 14 քար՝ Լուսինը դիտելու համար: Ենտաքքարական է, որ համալիրում կան նաև կոտոշավոր քարեր, որոնք կարելի է նմանեցնել խոյերի կամ անգուլս կենդանիների, և արևը ծագում է հենց այդ կոտոշների մեջտեղում: Կա ենթադրություն,

were not made with a strong blow, but rather were craft with extreme care and precision. It should also be noted that of the 223 stones, the orientation of 84 had their peak edges directed towards different points in space, and facing certain positions of celestial bodies. In light of this, there is a school of thought that the stones could have served as a means for astronomical observation, rather than as tombstones.

It has been a popular belief for some time that the array of stones is the remains of an old graveyard, temple or a fence. So what actually is the original purpose of this field of stones?

Seventeen stones at the site are designed to observe the sun, and 14 stones, to observe the moon. It should be noted that there are also horn-like protrusions on some stones, resembling rams or headless animals, as the sun rises just between those horns. It is assumed that stone number 63 was a sundial, while stone numbers 60, 62 and 63 could measure the geographic latitude of the site with 30 seconds precision, observe the Sun and the Moon with a precision of 2 seconds, and the stars and planets with a precision of 3.4 seconds.¹⁹ A number of experts note



© JACOB MAJARIAN

Կոտոշավոր քարեր. կարելի է նմանեցնել խոյերի, կամ անզլուխ կենդանիների, և արևը ծագում է հենց այդ կոտոշների մեջտեղում
The Sun rises between the horn-shaped stones at Zorats Karer.


որ թիվ 63 քարը հանդիսացել է արևային ժամացույց, իսկ թիվ 60, 62, 63 քարերի համալիրի միջոցով կարող էին 30° ճշտությամբ չափել տեղանքի աշխարհագրական լայնությունը, դիտել Արևն ու Լուսինը՝ մինչև 2 վայրկյան, իսկ աստղերն ու նոլորակմերը՝ 3.4 վայրկյան ճշտությամբ¹⁹: Անցքերով քարեր կան ոչ միայն Զորաց քարերի դաշտում, այլ իբրև նախնադարյան մահարձաններ կանգնեցված են նաև Յայաստանի տարբեր վայրերում գտնվող դամբարանների վրա: Իհարկե նման փաստը չի հերքում, որ քարերի անցքերից նայել են երկնքին: Նախնադարյան համայնքի պատասխանատումերը մահարձանի անցքից կարող էին հետևել հանգուցյալի աստղին՝ իմանալու համար, թե քանի պարբերաշրջան հետո պատմությունը նորից կըրկնվի, նախնու պատմություն, որն այնքան կարևոր էր ողջ համայնքի քարեկեցության համար:

Դնավային թվագրման ուղղությամբ գիտական լուրջ հաշվարկներ է կատարել ակադեմիկոս Պարիս Հերումին: Նա կիրառում է հետազոտական չորս՝ միմյանցից անկախ մեթոդներ²⁰ և դրանք ճշգրտորեն համադրում Երևանի քարի և սիլիկատների ինստիտուտում քարերի տարիքը որոշելու համար քիմիական և ֆիզիկական լաբորատորիաներում պրոֆեսոր

that the holes which were pored into the stones are found not only at Zorats Karer, but on other prehistoric tombstones as well. This fact however does not contradict the idea that the openings were used to observe the sky. The leaders of the prehistoric community could have traced the deceased person's star in order to find out information they deemed crucial for the welfare of the entire community, such as the cycle before history would repeat itself, or find out information about an ancestor's history.

Academician Paris Heruni has done important scientific work with regard to dating the archeological site by making use of four independent astrological methods²⁰ and comparing the results with the data obtained by Prof. Babayan measuring the age of rocks and stones (labs of the Yerevan Institute of Stone and Silicates). Using all the methods at their disposal, the Mighty Stones were dated by researchers to 7,500 BC.²¹ This makes the Mighty Stones Armenian archeological site 3,500 years older than the Stonehenge, and 3,000 years older than the Egyptian pyramids, while the oldest civilizations are considered to have begun in 5000 BC. Of course,

{ Անձեռի միջոցով երկիրը դիտելու
տևակետը կողմանկիթները գտնում են,
որ որոշ քարերի անձեռութ Հայովունքը
տեղադրելու Պարզպայուս դրամք, ոս
էոհայա, Դաշունք են Ժամանակակից
Պերսկոնիկ սարքի նախատիղերը:



SOME BELIEVE THAT BY
PLACING MIRRORS IN
THE OPENINGS ONE MAY
CONSIDER THE PHENOMENA
AS THE INSTIGATOR OF THE
MODERN AGE PERISCOPE.



Զորաց մենիքներ, 1934 թ.

Zorats Menhirs, 1934

Ժողովուրդ
Տեղաբնակություն
«Քարե գալաք»,
«Հիմնաբարեր»,
«Ցիթ քարեր»:

Բարայանի ստացած արդյունքների հետ: Ըստ բոլոր ներողմների համադրության, Զորաց քարերը հնարավոր եղավ թվագրել մ.թ.ա 7500 տարով²¹: Յնարավոր է, որ հայկական այս հնավայրը 3500 տարով մեծ է Սրովունիենցից, 3000 տարով Եգիպտական բուրգերից, իսկ ամենահին քաղաքակրություններն աշխարհին երեսին հաշվում են թերևս մ.թ.ա. 5000 տարվանից: Իհարկե Նման մոտեցումներին թերվում են նաև հայկափառարկներ, հատկապես այն մասին, որ այդ քարերը ժամանակի ընթացքում շարժվել են և այն դասավորությամբ չեն, որ եղել են մ.թ.ա 7500 թ-ին, այսօր արդեն փոխել են իրենց դիրքերը:

Յնավայրը եղել է նաև պաշտամունքային կենտրոն: Տեղանքի ընտրությունն իսկապես պատահական չէ, այն գտնվում է արևապոլիսի և նազմիսական ուժեղ դաշտի ամենակենտրոնում²²: Յերունին ենթադրում է, որ Զորաց քարերի կենտրոնական հատվածի 7x5 մետր չափերով քարակույտը²³ նախապատմական Արևի Ար²⁴ աստծոն պաշտամունքին նվիրված տաճարի ավերակն է,²⁵ հարավային և հյուսիսային 110-150մ երկարությամբ թևերում դրված են աստղադիտական և լուսնադիտական քարերը, իսկ համալիրի անկյունային հատվածները ծառայել են կրթական նպատակներին: Յնավայրում կան քարեր, որոնց հակառակ կողմից դրված են նաև մամր քարեր, որ դիտումների ժամանակ ուսուցչի ու աշակերտի համար հավանաբար ծառայել են որպես նստարաններ, օրինակ՝ N160 և 161 քարերը: Յերունին ենթադրում է նաև, որ հնավայրը՝ իբրև պաշտամունքային կենտրոն, գործել է բավականին երկար ժամանակ՝ կառուցման շրջանից մինչև քրիստոնեության ընդունումը Յայաստանում²⁹:

Իսկ ինչո՞ւ Զորաց քարեր կամ

these theories may be challenged with objections, especially that in the course of time the stones may have been displaced and changed their positions.

The archeological site was also considered as a place of religious worship. The choice of site was indeed not accidental; it is located in the center of a strong magnetic field.²² Heruni suggests that the pile of stones²³ measuring 7 x 5 meters in the center of the Mighty Stones is the remains²⁴ of a temple of the god of the sun named Ar,²⁵ while in the southern and northern wings of the 150m long temple there were the stones for observing the stars and the moon, and the corner premises were used for educational purposes. Indeed, there are large stones with smaller stones on opposing sides, which were used as seats for the instructor and the student during observations, like stones number 160 and 161. Heruni also suggests that the site operated as a center of worship for thousands of years, from the time of construction up until the Armenia's adoption of Christianity as a national religion.²⁶

But why the name Mighty Stones (Zorats Karer) or Karahunj? Another old name for the site in Turkish is Ghushun Dash which can be translated as the stones of soldiers. There is a popular legend telling of troops buried under the menhirs, the number of warriors stationed under each stone being dependent upon its size. Hostile troops have always passed by the side of these stones with awe, slowing down their horses' pace lest they should awaken the sleeping forces. The local population has named the site Stone Treasure, Base Stones, or Pillar Stones. The name Karahunj²⁷ is presently widely circulated, following the coverage it




PHOTO BY ARSINEH KHACHIKIAN

Անչ է իրավականում քայլելի դաշտը և ինչ գարձառութեակելի համար է նախապետած եղել:

Շրջանառվում է նաև այն մոտեցումը, որ Զորաց քարերի համալիրը նախնադարյան աստղադիտարան է²⁶: Աստղադիտարան բառը նախնադարի համար պետք է ընտրել և գործածել գգուշավորությամբ և վերապահումով: Աստղադիտարանն ավելի շատ ժամանակակից հասկացություն է, որ ենթադրում է հատուկ շինություն, որտեղ Երկրի վրայից գիտականորեն ուսումնասիրում են տիեզերքը: Չափազանցություն կիմնի նախնադարում գիտական աստղադիտարաններ ունենալու մասին խոսելը, սակայն այն իրողությունը, որ հատուկ մշակված քարերի անցքերից նախնադարում հետևել են Երկնային լուսատուների շարժումներին, բավականին խելամիտ է: Այս, նախնադարում մարդիկ մեծապես կախված էին Երկնային քարեհաճությունից: Երկնքի հետ մշտական, ամենօրյա կապը նախնադարյան համայնքի համար կենսական անհրաժեշտություն էր:

Չէ՞ որ նրանք պետք է տեղաշարժվեին տարածության ու ժամանակի մեջ, իրականացնեին Երկնային լուսատուներին ու բնությանը նվիրված պաշտամունքային ծեսերը, դաշտային աշխատանքների ժամկետների համար հետևեին տարվա եղանակների հերթափոխությանը: Տեղանքում պեղվել ու հաստատագրվել են նաև հնադարյան Երկնադիտական առարկաներ, ինչպես նաև մ.թ.ա. III-II հազարամյակներով թվագրվող դամբարաններ ու բնակավայր:

Քարերն ունեն նաև կոտրվածքներ, դրանց մի

մասը պառկեցված է, ինչից կարելի է ենթադրել, որ հուշարձանը միտումնավոր վնասվել է արտաքին թշնամիների հարձակումներից, իսկ միգուցե, նախնադարում Երկնային լուսատուներին դիտել են նաև պարկած դիրքից:

Իսկ ինչպէս կարող էին քարերն օգտագործվել իրեն Երկնադիտական սարքավորումները: Անցքերի միջոցով Երկինքը դիտելու տեսակետի կողմնակիցները գտնում են, որ որոշ քարերի անցքերում հայելիներ տեղադրելու պարագայում դրանք, ըստ էլեքտրան, դաշնում են ժամանակակից պերիսկոպիկ սարքի նախատիպերը: Դայելի չունեցող նախնադարյան մարդիկ կարող էին օգտագործել օրսիդիանը՝ ժողովրդական անվանամբ՝ «սատանի եղունգը», իսկ բամբուկը կամ եղեգը կիրառել իրեն միևնույն անցքերից ժամանակի տարբեր պահերին Երկնային տարբեր մարմինները դիտելու խողովակ: Այսպես, քարերի միջոցով Դայկական լեռնաշխարհում կարող էին հետևել արևի նկատմամբ աստղերի և մոլորակների շարժմն, կանխատեսել արևային և լուսնային խավարումները, սեզոնային գիշերահավասարները, հանգել արեգակնային արևակենտրոն համակարգի և Երկրի գնդաձևության գաղափարներին²⁷, իմանալ պիեցեսիայի Երևույթի²⁸ մասին Կոպերնիկոսից, Գալիլեյից, Քեպլերից ու Նյուտոնից շատ հազարամյակներ առաջ:

What is the main purpose of this plateau and what roles do the mighty stones play?

According to one theory that, the complex of the Mighty Stones is a prehistoric version of an observatory.²⁸ It has to be made clear that the word observatory with regard to prehistoric times has to be used with care. An observatory is a contemporary concept, suggesting a special structure for scientific examination of space from the surface of the Earth. It would be an overstatement to talk about observatories in prehistoric times. However, the assumption that specially produced openings in the prehistorically dated stones were directed to trace the movements of celestial bodies is quite possible. In ancient times people believed that their lives and fortunes were largely dependent upon a favorable attitude by the heavens, therefore a continuous link with the heavens was a vital necessity for this prehistoric community. They had to track the ever moving celestial bodies, they had to schedule ritual worship dedicated to both celestial bodies and to nature, and they had to time their agricultural work throughout the year. Discovered on the site have also been ancient astronomical objects as well as burial vaults and dwellings built in the 3rd – 2nd millennium BC. Some stones are in a horizontal position, suggesting possible attempts of vandalism,


though it may be because ancient astronomers observed space while lying on the ground.

In what way, then, could the stones be used as instruments to observe the sky? Supporters of the openings theory think that placing mirrors in the openings would make it resemble a precursor of the modern periscope. Having no mirrors, the prehistoric people could make use of obsidian, which today in Armenia is called "the devil's claw," while bamboo or reeds could be used as tubes for looking at celestial bodies through the same openings. Thus, the stones could be used to trace the movements of stars and planets, to predict the solar and lunar eclipses, the seasonal solstices, to arrive at the ideas of the heliocentric system and the spherical shape of Earth,²⁹ to be aware of the phenomenon of precession³⁰ many thousands of years before Copernicus, Galileo and Newton.



PHOTO BY MAX SVASLIAN

{ Այսինքն, բարերի միջոնով Հայկական
լեռնաշխարհութ կարող էին Հետևել
արևի և պատմաբ և սուրերի և
ալլորականի ժարժին, կանաչեսել
արևային և լոհաւայրն Խավարութեանը,
սեղուային գրշերաշավարները...



THE STONES COULD BE USED
TO TRACE THE MOVEMENT
OF THE STARS AND PLANETS
AS WELL AS PREDICT THE
SOLAR AND LUNAR ECLIPSES
OR SEASONAL SOLSTICES.



Քարահունջ: Երկար ժամանակ հնավայրը այլալեզու ձևով կոչվել է Ղոշուն Դաշ, որը հենց թարգմանվում է Զորաց՝ զորքերի քարեր: Ժողովուրդը պատմում է մի հետաքրքիր լեզենդ այն մասին, որ մենակիրների տակ քարնված են զորքեր: Ըստ քարի մեծության, ամեն մի քարի տակ տեղակայված է զինվորների համապատասխան քանակություն: Թշնամիները միշտ անով են անցել այդ քարերի կողքից՝ դանդաղեցնելով ծիերի վարգը, որպեսզի որքան հնարավոր է անաղմուկ հեռանան և չարթնացնեն քնած զորքին: Ժողովուրդը տեղանքն անվանել է նաև «Քարե գանձ», «Նիմնա-քարեր», «Ցից քարեր»: Այժմ Քարահունջ անվանումը³⁰ լայնորեն շրջանառվում է Պ. Շերունու տեսակետների հրապարակումից հետո: Քարահունջ քարը Շերունին մեկնաբանում է այսպես. այն կազմված է «քար»՝ ք+ար, որ կապվում է ամրության, կայունության ու արկի հետ, և «հունց»՝ հնչյուն, արձագանք, փունց արմատներից՝ այլաբանորեն մեկնաբանվելով որպես խոսուն, երգեցիկ, գորաց, զորաց, իշխանության քարեր³¹:

Նախապատմական շրջանի Զորաց քարերի գոյությունը ժողովուրդը բացատրում է նաև քրիստոնեական հետևյալ լեզենդում. Ժամանակին այս վայրում եղել է մի տուն, որտեղ ապրել է շատ գեղեցիկ աղջիկ: Նրան բոլորը ննանեցրել են արեգակի և անվանել Արեգա: Արեգայի հարսանիքի օրը՝ այս պահին, երբ հայկական հարսանեկան ավանդույթի համաձայն հարսնացուին հազցնում էին նորահարսի զգեստը՝ երգերով գովերգելով նրա արժանիքները, սուրհանդակը լուր է բերում, թե թշնամին հարձակվել է նրանց գյուղի վրա: Բոլոր կանայք և աղջիկները ծնկի են գալիս և աղեսաշունչ աղոթք բարձրացնում առ Աստված, որ թշնամին չկարողանա իրենց հաղթել, իսկ իրենց այրերը ի զորու լինեն դիմակայել ոսխի հրոսակներին: Շենց որ թշնամիները մոտենում են, բոլոր աղջիկները և կանայք վերածվում են քարերի՝ մեջտեղում՝ հարսնացուն, իսկ մյուսները՝ նրա շուրջը: Երբ թշնամիները դիմում են քարերին՝ փորձելով հասկանալ, թե ինչ կատարվեց, մահանում են: Այդ օրվանից քարերն անվանվել են Զորաց քարեր:

Տեղանքի մագնիսական ազդեցության ուժեղ դաշտի ու մոգական նշանակության մասին վկայում են նաև տեղացի հովհանքների շրջանում տարածված պատմություններն այն մասին, որ այստեղ արածող

received through the research efforts by Heruni. The word Karahunj is interpreted by Heruni as follows: it is constructed the element KAR or K+AR, which is associated with firmness, stability and with the sun, and the element HUNJ, to be interpreted as sound, echo, cluster, expressive, singing, mighty, ruling.³¹

The following is one of many legends about this controversial site: Long ago a very beautiful girl lived in this area. Her beauty resembled that of the Sun, and hence she was named Arega (Ar for sun in Armenian).

On the day of Arega's wedding, when the bride was being prepared for the ceremony in songs praising her virtues, the messenger reported that the village was under attack by enemy forces. All the women and girls present knelt to pray for salvation, lest the enemy should win. The men in the meantime took up arms against the assailant.


As the enemies got closer, all the girls and women turned into stone, with the bride-to-be in the center. When the enemies touched these stones, they instantly died. Therefore, these stones are called Mighty.

The truth behind all these legends is that the name of the beauty was Arega, the Sun, causing us to see many transformations of the effect of the sun on the locality. The stones conceal strength. Selection of this site by prehistoric builders was not accidental, it was deliberately positioned in a powerful energy field. The site's magnetic forces and magical effects are demonstrated by the rapid growth and fattening of the goats and sheep grazing in that area.

The architectural complex of the Mighty Stones does not display many esthetic features, but this constellation of stones produces a great impression simply by its general design and distribution within the surrounding space, by the natural rhythmic structure and the emanation of energy. It is an attempt at streamlining the chaos of the universe, to perpetuate what is the most important—the periodic properties of time, and to deposit the ancient knowledge on the spherical form of the earth and the heliocentric system of the Sun and planets.

Zorats Karer may have been the controlling center of the megalithic structures in different parts of the world.³²


Զորաց քարերի Հայալիր
քարային այդ «բոյլը»
ճածում է իր ծավալ-
Տարածական Հորինվածքի
Վայրի Վեշոհայատ,
բնական ՈՒԹՄԵՐԻՆ և
Էներգիային Հաղորդակար
Լինելու ուժով:



ոչխարներն ու այծերը արտասովոր կերպով գիրանում են և քաշ հավաքում: Բոլոր այս լեզենդներում թաքնված ծշմարտահատիկն այն է, որ գեղեցկուին անունը եղել է Արեգա՝ Արև, հետևաբար աղավաղված կերպով տեսնում ենք հնավայրի կապը Արևի հետ: Քարերը իրենց մեջ թաքցրել են զրոյություն, տեղանքի ընտրությունը նախնադարյան կառուցողների կողմից պատահական չի եղել, այլ այն միտումնավոր տեղակայված է եներգետիկ ձգողության հզոր դաշտում:

Զորաց քարերի համալիրի ճարտարապետության մեջ դեռևս ի հայտ չեն գալիս գեղարվեստական ճաշակի տարրեր, բայց քարային այդ «բույլը» ցմցում է իր ծավալատարածական հորիզոնվածքի վայրի վեհությամբ, բնական ոիթմերին և էներգիային հաղորդակից լինելու ուժով: Այստեղ փորձել են կանոնակարգել համատիեզերական քառորդ, հավերժացնել ամենակարևորը՝ ժամանակի պարբերաչափը, գետեղել նախնադարյան գիտելիքները Երկրի գնդաձևության և արեգակնային արևակենտրոն համակարգի մասին:

Միգուցե այն եղել է մի յուրօրինակ ուղեղային կենտրո՞ն, որտեղից դեկավարվել են երկրագնդի տարրեր կետերում տեղակայված մեզալիթյան կառուցվածքները³²: ☺



The background image shows a rugged, green mountain slope. A stone wall with arched openings runs across the bottom foreground. The text is centered over this wall.

«Գեղարդի Վանք»

{Geghard Monastery}



PHOTO BY ARSINEH KHACHIKIAN



Այրիվանք կամ Զորագ Գեղարդ

Ayrivank Monastery or the Holy Geghard

Իրևանից 35 կմ հեռավորությամբ՝ Ազատ գետի աջ ափի ծորալանջին, Գեղաման լեռների բնական «աշտարակների» գրկում հանգրվանում է պատմական Գեղարդաձորի Այրիվանքը։ Ըստ հայկական մատենագրական ավանդության, այստեղ առաջին եկեղեցական շինությունները կառուցվել են IV դարի կեսերին՝ Յայաստանում քրիստոնեության ընդունման սկզբնական շրջանում, Յայոց Սեծ Լուսավորիչ Գրիգորի կողմից։ Բազմաթիվ մանրանամեր, սակայն, կարող են փաստել, որ հեթանոսական ժամանակներում նույնանուն Վայրը եղել է աստղային երկնքի պաշտամունքին նվիրված խոշոր կենտրոն։ XII-XIII դդ.՝ Զաքարյանների օրոք, վաճառք հասնում է ծաղկման գագարնակետին։

Գեղարդավանքը եղել է անվանի աստվածապաշտական աղոթքատեղի և ուխտատեղի, ճգնակյաց կյանքի մենաստան։ Ավանդությունները պատմում են, որ 140-ից ավելի խցերում հարյուրամյակներ ի վեր կատարելություն են փնտրել աստվածնեան ճգնավորները՝ ի դեմս հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի, առաջին քրիստոնյա արքա Տրդատ Մեծի և արքունի վերնախավի անդրանիկ քրիստոնյաների։ Լուսավորչի պատկերը փորագրված է եկեղեցու

GEGHARD MONASTERY, once known as Ayrivank, lies in a gorge of the same name, by the Azat River. The fortified walls are surrounded by the natural rock towers of the Geghama Mountains, and the complex is just 35 kilometers from Yerevan. According to Armenian manuscripts, the first churches were built here in the mid 4th century by St. Gregory the Illuminator, shortly after the adoption of Christianity in Armenia. However, abundant evidence proves that in pagan times this site was a major star worshipping shrine. In the 12th – 13th centuries, during the rule of the Zakarian princes, the monastery reached the peak of its prosperity and expansion.

Geghard Monastery is renowned as a place of worship, pilgrimage and seclusion. According to local lore, people like St. Gregory the Illuminator, King Trdat the Great and the first Christians of the royal court used to come to seek holiness through solitude in the more than 140 cells. The image of St. Gregory the Illuminator is carved above the eastern stairs of the church as evidence of his time at this site. Geghard had a seminary, a scriptorium and an original school of miniature painting.³³ For centuries the monastery



PHOTO BY RAFFI KOJIAN

Պատերի մեջ ագուցված են խաչքարերը, որոնք եսթետիկ և խորհրդապաշտական բացարձիկ գեղանմուշներ են:

Mounted Kachkars are eminent samples of esthetic and mystical artifacts.

...Փորագրված

Դատարարաւուականոր
Կարծես Կետաւաւայս
ու սկսում են
Շարժուել, երբ Նրանք
Կրա բնաւում են առար
Ճառագյալները...

արևելյան կողմի աստիճաններից վեր՝ իբրև ճշմարիտ վկայություն: Գեղարդավանքում գործել է հեղինակավոր դպրանոց, գրչատուն, մանրանկարչական ուրույն ուղղության ձեռագրատուն³³: Գեղարդի հոգևորականները դարեր ի վեր ունեցել են մեծարիվ գանձեր, կալվածքներ և բանկարժեք ձեռագրեր, որոնք թալանվել են արարմների (Խ), սեղուկ-քուրքերի (XII), մոնղոլ-թաթարների (XIII-XIVդդ) կողմից: Վանքը պարբերաբար տուժել է նաև բնական արիավիրքներից և փխրուն ապարների քայրայումից: Վանական համալիրի այժմ կանգուն կառույցները թվագրվում են XII-XIIIդդ.՝ ներկայանալով միասնական հավասարակշռությամբ և ամբողջականությամբ:

Գեղարդավանքը քարանձավային մեմաստան է և հիշեցնում է նաև առաջին քրիստոնյանների գաղտնի կատակոմբները: Գեղարդի ճարտարապետության մեջ նյութականացված է հրաշքն առ այն, որ այստեղ մարդկային լեզուն՝ արվեստը, հաղորդակից է դարձել և հանդիպել Աստծոն լեզվին՝ շրջակայիր անզուգական բնությանը: Յայտնի են նաև այդ հրաշագործ ճարտարապետի՝ Գալճագի, ինչպես նաև խաչքարերի քարակոփ վարպետների՝ Մխիթարի և Տիմոթի անունները:

Գեղարդավանքի չորս հիմնական եկեղեցիների մուտքի համար կա միայն մեկ ընդհանուր դուռ, որ խորհրդանշում է Քրիստոսի՝ որպես կյանքի ճանապարհի դուռ, և նրա չորս ավետարանիներին: Գեղարդավանքի ճարտարապետական խաչաձև հորինվածքում ակնհայտ է սրբազն երկրաչափության սկզբունքների և չորս թվի միասին նշանակության կիրառումը:

Յամալիրի գլխավոր եկեղեցին գմբեթակիր Սուլը Կաթողիկեն է

possessed plentiful treasures, estates and precious manuscripts which were later plundered and pillaged by invading Arabs (10th c), Seljuk Turks (11th c), and Mongols (13th – 14th c). The monastery has also periodically suffered from natural disasters and rocks falling from the cliffs above. The current buildings of the monastery date back to the 12th – 13th centuries, forming a balanced and integrated compound.

Geghard monastery served as a cave hermitage, similar to the secret catacombs of the early Christians.

The miracle of Geghard's architecture is the fusion of the human language of art with God's language of breathtaking nature. Galdzag was the genius architect of this miraculous masterpiece. Master craftsmen such as Mkhitar and Timoti were the creators of the refined khachkars (cross-stones) of Geghard.

To enter the four major churches of Geghard Monastery, there is a single gate that symbolizes Jesus as a door to life and the four Evangelists.


The layout of the main church, St. Katoghike, built in 1215, consists of a cross inside of a rectangle with four corner vestries. There is a mystical meaning to the number four.

In 1215-1225, a domed *gavit* used as a chapel was attached to the western wall of St. Katoghike with a natural rock wall on the northern side. In the 13th century, the Proshian princes purchased Geghard Monastery from the Zakarians and resumed cave digging. The Proshians built a family mausoleum in which the sarcophagus was probably placed in the niche opposite the entrance.³⁴

Next to the mausoleum, a chapel was carved around a trickling


Տոնական օր
Գեղարդավանքում, 1916 թ.

Day of festivity at
Geghardavank, 1916



{ ԻնՉ-ո՞ր արածատելի ուժ օգոստ է
դեղի սերս, որտեղ իշխում է
Կիսանապարի, Երոբիկի թագավաճող
արևային ճաճառաւերի և տուերի
կայծկլտուն լույսի ու ստերւերի
հոռչրդակոր Խաղոր:





...THE SUNBEAMS
COMING FROM THE
OPENING IN THE ROOF
AND CANDLELIGHT
PLAY MYSTERIOUSLY
WITH SHADOWS.

(1215թ.), որի հատակագիծը ուղղանկյան մեջ ներգծված խաչն է, անկյուններում՝ 4 ավանդատներ: 1215-1225թթ. Կաթողիկեթի արևանդան կողմում կցակառուցվում է զմբեթավոր գավիթը՝ ժամատունը, որի հյուսիսային պատը բնական ժայռագանգվածն է: XIII դ.

Պողոշանների տոհմը Զաքարյաններից գնում է Գեղարդավանքը և շարունակում քարանձավային շինարարությունը: Այս ժամանակ է կառուցվում նրանց ընտանեկան դամբարանը, որի մուտքի դիմացի պատի խցում հավանաբար դրվել է հանգուցյալի սարկոֆագը³⁴: Դամբարանին կից կառուցվում է Ավագանի եկեղեցին, ուր ներսում բխում է բնական կենարար աղբյուրը: Ավագանի ջուրը համարվել է սրբազն և բաղադրության մեջ ունի արծաթ ու ծծումք: Քիմիական այս երկու տարրերը գրեթե բոլոր ժողովուրդների հավատալիքներում և առասպելներում համարվել են բուժիչ, ֆիզիկական ուժերը վերականգնող մոգական տարրեր, հետևաբար Ավագանի սուրբ աղբյուրից ջուր խմելով կամ լվացվելով՝ կարելի է կազմուրվել: Գեղարդավանքի սրբազն աղբյուրը ակամայից կապվում է ժողովրդական հավատալիքների պաշտամունքային «լուսնաղբյուր, կաթնաղբյուր»-ների հետ և իր զուգահեռներն ունի համաշխարհային մշակույթի նմանատիպ այլ գլուխօփործոցների հետ³⁵: Ավելին, արծաթ պարունակող ջուրը շատ լավ օգնում է աչքերին: Առավել առեղծվածային են համալիրի երկրորդ հարկի ժայռափոր եկեղեցիները: Եկեղեցիներն ունեն խցեր, որոնք համախացել են իշխանների անձնական, մասնավոր առանձնարաններն ու աղոթատեղիները: 1283թ. ժայռում փորվում է սրբ Աստվածածնի եկեղեցին, իսկ 1288թ. Պողոշան



PHOTO BY RAFFIKOJAN

Գեղարդավանքի խցեր | Cells at Geghardavank

natural curative spring. The spring water is considered holy and contains silver and sulfur. Nearly all religions and legends consider these two elements to be medicinal and ascribe to them wonder-working recuperative properties. Water containing silver is also a good remedy for ailing eyes. Hence, one can indeed benefit from drinking the holy water or washing with it.

Geghard's holy spring water is also popularly associated with the symbols of purity and source of light, also revered by non-Armenian folklore.³⁵

The second-tier cave churches are most mysterious. There are cells which used to be the private secluded retreats of princes. In 1283, the St. Mary's church was carved in the rock as well. In 1288,

} 140-րդ և եկեղեց
 և առաջնարդություն
 Հայոց հրամայակներ
 Ի Վեր Կատարելություն
 Եւ Փատրել
 և Ստվածունծ
 ճգնաւորություն...



PHOTOS BY RAFFI KOJIAN

Գեղարդավանքի չորս եկեղեցների
մեկ հիմնական մուտքը (վերև),
Պողյան իշխանների ընտանեկան
զինանշանը (ներքև)

Main entrance to the four churches
at Geghardavank (above)
Coat of Arms of the Proshyan
dynasty (below)

BENEATH THE LIONS,
AN EAGLE IS CLAWING A
LAMB. THIS RELIEF IS
TRADITIONALLY BELIEVED
TO BE THE PROSHYAN
DYNASTY'S COAT-OF-ARMS

Սովորմած Պապակի և Ռուզուկանի
պատվերով և մեկ եկեղեցի՝ ի
հիշատակ նրանց մահացած
զավակների՝ Մեղրիկի և Գրիգորի:
Կեսօրին արևի ճառագայթներն
ընկնում են ուղիղ դամբարամի վրա:
Թե ինչի հետ է կապված նման
լուսավորությունը, առայժմ
առեղծված է: Ավելին, այստեղ՝
գրեթե կենտրոնում, կա մի սյուն,
որին կարելի է ծերքը պարզած
մոտենալ, խոսել և ունենալ
ապշեցուցիչ մի զգացողություն, եթե
սեփական արտաքերած մտքերը
շրջապտույտ կատարելով հետ են
վերադառնում քեզ: Պատերի
քարերի շարվածքը նոյնական
միտումնավոր հաշվարկված է
սեյսմակայուն և ակուստիկ
նպատակների համար, ուստի
զմբերի ներքո մեներգ-շարականը
բազմահունչ արձագանքներով
վերածվում է երգչախմբի կողմից
կատարվող ախորժավոր
երաժշտության³⁶: Համալիրի
ամենահին կառույցը կենտրոնական
մուտքին չհասած՝ արևմտյան
կողմում գտնվող կիսով չափ
քարանձավում ամփոփված փորդիկ
ժամատում է, պատերին՝ 1177 և
1181 թթ. փորագրություններ: XVII-
XVIII դդ. եկեղեցիների շուրջը
կառուցվել են տնտեսական և
բնակարանային շինություններ,
որոնք միջնադարում ծառայել են
նաև որպես հյուրանոցներ՝ մթով
Ազատ գետն անցնել չհանդուն
անցորդների համար:

Համալիրի կամարից ներս
անմիջապես հասնում է վանքը՝ իր
արտաքին տեսքի ասկետիկ ձևերի
պարզությամբ, տերակոտայի և
մանուշակագույնի երանգներով
տուֆ քարի միջոցով
նյութենացված եկեղեցիների
հմայրով: Թվում է, թե ժայռերից
ծնված Գեղարդավանքն ինքը
ժայռերի շնչող ողին է: Ուղղահայաց
գծերի միջոցով ստեղծվում է
անվերջ դեպի վեր՝ երկնային
լազուրին սլամալու

Papak and Ruzukan of the Proshian dynasty ordered the building of another church to commemorate their deceased children Meghrik and Gregory. At noon, sunbeams fall exactly on their tombstone. As to what this lighting means is still a mystery. Moreover, close to the center, there is a column you can approach with spread arms, talk to it and surprisingly your words circle the room and get back to you. The walls are purposefully carved to withstand seismic tremors and to improve the acoustics; which is why a soloist singing under the dome produces the astonishing effect of a choir.³⁴

The oldest edifice in the compound is the small chapel partially built in a cave, on the western side, half way to the central entrance with inscriptions and carvings on the walls dating back to 1177 and 1181. In the 17th -18th century, rooms and auxiliary premises were built around the churches which served as bedrooms for the travelers who did not dare cross the Azat River in the dark.

Upon entering the compound enter the compound through the gate, one sees the austere contours of the monastery and the dark tint of the tufa masonry which reflects the surrounding mountains and adds appeal to the church. It seems the very rocks which balance precariously above the structures and endanger Geghard Monastery are their living soul. The vertical lines give the impression of a never ending accession to the azure sky.

The monastery's design inadvertently induces the onlooker to walk around in search of carvings of animals, flowers, mythological creatures and geometric patterns on the walls and doorways. These

Սուրբ Գեղարդը. ո՞րևէ է քնօրինակը

Եվ այսպես, ո՞րն է բնօրինակը, և որտե՞ղ է այն այժմ: Այս հարցին ճշմարիտ պատասխանելու համար մետաղագործության պրոֆեսոր Ռոբերտ Ֆրեզերը կատարում է գեղարդների համեմատական հետազոտություն՝ մետաղների դարաշրջանի և գեղարդների չափերը Թուրինյան պատանքին³⁷ դաշված վերքի հետ համադրելու ուղղությամբ: Ստացված արդյունքներով՝ բնօրինակը Դայաստանի Մայր Աթոռ սր. Էջմիածնի վանքի ցուցանմուշը³⁸: Այն ինչ տեսնում եք պատկերում, իր չափերով բավականին մեծ է մարդուն խոցելու համար, ինչպես նաև մետաղը, որից պատրաստված է աչքով տեսանելի գեղարդը, ոուլապես պատկանում է IX դարին, սակայն հետազոտությունը ցույց է տվել, որ Լոնդոնուսի խկալան զորաց գեղարդն ազուցված է այդ մետաղի մեջ: Այն հանելու ու նրա զորությունը օգտագործելու վերաբերյալ գոյություն ունեն հասողված ծեսերի նկարագրություններ: Ահա թե ինչու աշխարհակալ նվաճողներից և ոչ մեկին չի հաջողվել իրականացնել իրենց կայսերապաշտական բարբաջանքը: Չէ՞ որ նրանցից և ոչ մեկի ծեռքում չի եղել բնօրինակը, որը հայոց հողում պահվելով՝ ժառայել է միայն բարի նպատակներին: Դայոց եկեղեցին Սր. Գեղարդով և Սր. Գրիգոր Լուսավորչի աջով յոր տարին մեկ անգամ կատարում է Սուրբ մեռոնի օժնան արարողությունը:

Այն ինչ տեսնում եք պատկերում, իր չափերով բավականին մեծ է մարդուն խոցելու համար, և Լոնդոնուսի խկալան զորաց գեղարդն ազուցված է այդ մետաղի մեջ:

In this photo, the Holy Lance is too large to make such a wound. The actual Lance is protected inside its metallic shield

Which is the original and where is it now?

To answer this question, professor of metallurgy Robert Fraser performed a comparative examination of the metal age of the spears and correlated the sizes of the latter with the imprint of Christ's wound found on the Shroud of Turin.³⁵ The result appears to confirm that the original spear is the one kept in Holy Echmiadzin.³⁶ What you see in the shroud is a rather large wound, correlating in size to the Armenian spear. Scientists have determined the metalwork belongs to the 9th century, however, further examination demonstrated that the genuine Holy Geghard of Longinus was merged with this metal.



COURTESY OF ECHMIADZIN



PHOTO BY ARSINEH KHACHIKIAN

Ավազանի ջուրը համարվել է սրբազան և բաղադրության մեջ ունի արժաք ու ծովում՝ ֆիզիկական ուժերը վերականգնող մոգական տարրեր

This pool of water is considered to be holy containing silver and sulfur which are considered as invigorating mystical elements

Սպավորություն: Վաճիքի ճարտարապետությունը ականայից կարծես պարտադրում է պատվել իր շուրջբռնորդ՝ զննելու համար պատերին և դրներին փորագրված կենդանական, բուսական, դիցարանական, երկրաչափական պատկերաբանութակմերը, որոնք կարծես կենդանանում ու սկսում են շարժվել, երբ նրանց վրա ընկնում են արևի ճառագայթները, և քարանում, անշարժանում են կրկին, երբ մայր է մտնում արեգակը: Պատերի մեջ ագուցված են խաչքարերը, որոնք էսքետիկ և խորհրդապաշտական բացառիկ գեղանուշներ են: Ապա, ինչ-որ անբացատրելի ուժ ձգում է դեպի մերս, որտեղ իշխում է կիսախավարի, երդիկից թափանցող արևային ճաճանչների և մոմերի կայծկլտուն լուսի ու ստվերների խորհրդավոր խաղը: Լուսաստվերային պատկերները, ներհաշնակվելով պատերից սահող ջրի մեջն կարկաչունի հետ, ստեղծում են հեքիաթային խորհրդավորության, խորության ու աստվածային ուժի ներկայության պատրամք:


Գեղարդավանքի՝ ոչ սովորական եկեղեցական համալիր լինելու մասին վկայում են նաև նրա ջուրը հյուսված բազում առասպելներն ու անվան ստուգաբանությունը: Սկզբում վաճական համալիրը

carvings seem to come to life under sunlight and lie dormant when the sun disappears. Cross-stones of exceptional esthetics and religious significance are built in the walls. A mystifying force draws one into the dimly lit interior where the sunbeams coming from the opening in the roof and candlelight play mysteriously with shadows. Light and shadow merge with the water flowing from the wall, creating the impression of divine presence, mystery and the profound.

The numerous legends and the origin of its name attest to the extraordinary history of Geghard monastery. Originally, the monastery was called Ayrivank. The word "ayr" in Armenian means both a cave and a man. Therefore, on the one hand, Ayrivank means "cave monastery" and on the other hand, "male monastery" where nobody but men were entitled to enter.

The newer name of the monastery is "Geghard," meaning spear in Armenian in reference to the Holy Spear that pierced Jesus' heart to ensure his mortal death and test his divine being, by the Roman soldier, Longinus. This sceptic soldier became a believer soon after his actions. He was baptized and later

{ Գեղարդի ճարտարապետության
մեջ պոհածառածված է
Հրաշքը առ պյա, որ պյատոն
արդկային լեզուն՝ արգեսը,
Հղողորակիթ է դարշել և
Հանդրուկ Ասծոն լեշպրւ



THE MIRACLE OF
GEGHARD'S ARCHITEC-
TURE IS THE FUSION
OF THE HUMAN
LANGUAGE OF ART WITH
God's LANGUAGE...




PHOTO BY TIGRAN BABAYAN

Գառնի հեթանոսական տաճարը ձմռանը | Garni Pagan Temple in wintertime

Կոչվել է Այրիվանք: Այր բառը հայերենում նշանակում է թե՝ քարանձավ, թե՝ տղամարդ, հետևաբար Այրիվանքը միաբանեթի կողմից այրերն իբրև ճգնարաններ օգտագործելու համար անվանվել է քարանձավների վաճք, կամ տղամարդկանց վաճք, ուր հրավասու էին գնալու միայն տղամարդիկ: Այլ կերպ համալիրը կոչվում է Գեղարդավանք: Գեղարդը նաև այն նիզակի տեղակալ է, որով հռոմեացի գինվոր Գայոս Կասիոս խոցում է Քրիստոնի կողը՝ ստուգելու նրա մարդկային, թե աստվածային եռթյունը: Գեղարդը կողից ծակելով Փրկչի թոքը՝ հասնում է սրտին: Տեսնելով դա՝ հռոմեացին հավատում է, որ խայըալ իրոք Աստծոն որդին էր, մկրտվում է իբրև քրիստոնյա՝ ստանալով Լոնգինոս անունը: Ըստ ավանդության և պատմամատենագրական խոսուն տվյալների, քրիստոնեության կարևորագույն մասունք հանդիսացող նիզակի տեղակալը IV դ. Երուսաղեմից Եղեսիա է բերում Քրիստոնի Թաղլոս առաջյալը՝ բժշկելու համար Արքար թագավորին:³⁷ Պառա Արքակյան իշխանի ջանքերով XIII դարից սր. Գեղարդը հանգրվանում է Այրիվանքում՝ այնտեղ մնալով ընդհուած մինչև XVIII դարը, որի շնորհիվ էլ համալիրը ստանում է Երկրորդ՝ Սուլը Գեղարդի վաճք անվանումը: XVIII դարի

attained sainthood. According to informed historical sources, this major christian relic was brought from Jerusalem to Edessa by the Apostle Thaddeus to heal King Abgar.³⁷ In the 13th century Prince Prosh Khaghbakyan brought the Holy Geghard to Ayrivank where it stayed until the 18th century, thus the monastery acquired the name of Holy Geghard. In the late 18th century, the Holy Geghard was moved to Echmiadzin and has been there ever since.

It is traditionally believed that the spearhead was forged by a cabbalist who oftentimes communicated with the Geghard to announce God's will to the people. According to various sources, the spearhead was later owned by some of the most important figures in human history,³⁸ who believed that the Geghard dyed with Christ's life-giving blood contains the magic powers of good and evil.

During the crusades, christians found inspiration in the Holy Geghard, the tomb of Jesus Christ and the keys to Jerusalem. There are so many legends circulating about the Holy Geghard that today "Holy Spears" can be found in Vienna, the Vatican,³⁹ Krakow and Echmiadzin, in Armenia. According to

Վերջերից այն տեղափոխվում է՝ պահպանվելու Մայր Աթոռ սր. Էջմիածնի վանքում և այնտեղ է գտնվում մինչ այսօր:

Ավանդությունը պատմում է, որ այդ նիզակը կոփել է հրեական կարքալիստ Ֆինեսը, որը գեղարդի հետ հարաբերվելով՝ բազում անգամներ ժողովրդին էր հայտնում Աստծո կամքը: Ապա, ամենատարբեր աղբյուրներում պահպանված տեղեկությունների համաձայն, այն պատկանել է համաշխարհային պատմության խոշորագույն դերակատարներին⁴⁰, ովքեր հավատացել են, որ Քրիստոսի կենարար արյամբ ներկած ծակատագրական գեղարդն իր մեջ կրում է շարի և բարու մողական ուժերը: Խաչակրաց արշավանքների ժամանակ քրիստոնյաները ոգևորվում էին սուրբ գեղարդով, Փրկչի գերեզմանի և Երուսաղեմի բանալիները գտնելու գաղափարով: Սուրբ գեղարդի շուրջ ստեղծված առասպելներն այնքան արմատացած էին, որ այսօր համանման «սուրբ գեղարդներ» են պահպան Վիեննայում, Վատիկանում,⁴⁰ Կրակովում և Յայաստանում: Համաձայն լեգենդի, ով կտիրի գեղարդին, կտիրանա նաև ողջ աշխարհին:

Մատենագրության մեջ կան հիշատակություններ, որ սուրբ Գեղարդը բուժել է ժամանակաշրջան և նույնիսկ քաղցկեղը, մարդկանց միջից հանել դեմքին, մեծամեծ նշաններ արել և «փարատել զամենայն չափ ախտ հիանդութեանց»⁴⁰: Իսկ ժողովրական ավանդությունները պատմում են, որ Գեղարդավանքի բանալիները դնելով համբ երեխայի բերանում՝ նա սկսում է խստել: Հայ ժողովուրդն իր երազանքների իրականացնումը մշտակես կապել է Գեղարդավանքի զորությունների հետ: Այստեղ՝ մուտքից ձախ ընկնող ժայռի փոստերի մեջ նետում են երազանքի քարեր: Եթե հաջողվում է քարը փոսի մեջ զցել, ապա երազանքն իրականանալի է, յուրաքանչյուր ձախողումն էլ հաշվում է մեկ տարի: Վաճիք պարհապնդերից դուրս ածող ծառերին կապում են երազանքի ժապավեններ, կամ Ավազանի սուրբ ջրի մեջ երազանքների համար մետաղադրամներ նետում: Իր եզակիության և կարևորության տեսակետից Գեղարդն այսօր ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային գանձերի ցուցակում:

Եվ այսպես, Զորաց Գեղարդի ուժն ու հոգելոր ներդաշնակությունը ծեռք բերած հեռացող այցելուն կարող է հայտնվել Յայաստանի արևապաշտության ամենախոշոր կենտրոնում և հաղորդակից լինել արդեն հելլենիստական շրջանի մշակությին, եթե Գեղարդից ուղևորվի Գառնի: Այս ժամանակարին նրան կուտեկցի բարձր պատվանդանի վրա կանգնած, Գեղարդավանքի ճանապարհը հսկող պահապան՝ նիզակավոր առյուծը... ☩

legend, he who owns the Holy Geghard will rule the world.

There is a set of rituals for the extraction and usage of the Holy Geghard. That is why none of the conquerors who wanted to rule the world succeeded. None of them ever possessed the original that has been preserved on Armenian soil and served only purposes of good. The Armenian Church once in seven years uses the Holy Geghard and St. Gregory's relics to bless the preparation of Holy Oil.


In several scriptures, it is written that the Holy Geghard has cured heavy illnesses such as the plague and even cancer, exorcise demons, perform great deeds and "overwhelm most malicious diseases."¹⁰


According to folklore, if the keys to Geghard monastery are placed into the mouth of a deaf-mute child he will start to talk. For centuries, Armenians have associated the realization of their dreams with the Holy Monastery of Geghard. At the gateway to the monastery, on the left-hand side, there are narrow niches carved in the rock which visitors throw rocks up to. If the stone stays in the niche, the dream will come true, but with each miss comes a year of waiting. Ribbons are also tied to the branches of the wishing trees outside the walls, or coins are thrown into the holy spring-fed pools. Due to its uniqueness and importance, Geghard Monastery is now listed as a UNESCO World Heritage Site.

Having taken in the power of the Holy Geghard Monastery complex, visitors can leave for the major sun worshipping center of Hellenistic culture in nearby Garni. Upon driving away from Geghard, visitors are bid farewell by the guardian of the road standing on a high pedestal, the Lion of Geghard holding a lance. ☩

TO ENTER THE FOUR MAJOR CHURCHES OF GEGHARD MONASTERY

THERE IS A SINGLE GATE THAT SYMBOLIZES JESUS AS A DOOR TO LIFE AND THE FOUR GOSPELS.





«Խոսրովի Անդամակյան»

{Khosrov Forests}



Խոսրովի Անտառները և Պատմական Զորագի Ծառածան

Khosrov Forests and the Mighty Grove

Գառն տաճարի հարավային կողմում՝ Երանոս, Իրից, Դահնակ, Ուրժ և Խոսրովասար լեռնաբազուկների լանջերին են ծավալվում դեռևս IV դարում տնկված, խոսրով արքայի ամունք կրող ամտառները, որ պատմակամորթն ողջ աշխարհում արհեստական անտառներից հնագույնն են: Տեղանքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում կենդանական և բուսական աշխարհի բազմազանության, երկրաբանության և պատմության տեսանկյունից: Այն գտնվում է Արարատի մարզում՝ ծովի մակարդակից 1400-2250մ բարձրությամբ լեռնային մակերևույթի վրա, և զբաղեցնում է 29,196 հա տարածություն: Տարածության անտառապատ հատվածը կազմում է ընդամենը 9000 հա: Պատմական Յայստանի ամենահին բուսաբանական թանգարաններ հանդիսացող անտառները 1958 թ. վերածվում են պետական արգելոցի⁴³:

Տիպիկ լեռնային լանջաֆտ ունեցող խոսրովի արգելոցի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը կազմում են լեռնահովիտները, լեռնագագաթները, զարդարական հանդիսացող անտառները, սարավանդներն ու կիրճերը: Աննման են գեղատեսիլ ժայռերն ու ջրվեժները, ալպյան մարգագետինները,

To the south of Garni Temple, spread across the Yeranos, Irits, Dahnak, Urts and Khosrovasar mountains lies Khosrov forest. The forest is named after King Khosrov, who created the oldest man made forest in history, dating to the 4th century. Located in the Ararat region, 1,400 - 2,250 m above sea level, this forest generates great interest because of its diverse flora and fauna, as well as its unique geological features. It covers a surface area of 29,196 hectares, of which only 9,000 hectares is dense forest. In 1958, Armenia's oldest forests were protected as national state preserves.⁴³

Khosrov forest's landscape consists of deep valleys, high peaks, steep slopes, curved foothills and gorges. It also has stunning boulders, scenic waterfalls, alpine meadows, mystifying caves, narrow canyons, and groves of sycamore maple and cedar trees. Each of these zones has its own microclimate within the forest. The mountains are made of limestone, sandstone and metamorphic rock. The national forest preserve is found in the basin of the Azat and Vedi rivers, and is surrounded by many streams. The miracles of nature are the small pyramid shaped



PHOTOS BY HRACHIA GHAZARYAN

Բեզոարյան այծ և հայկական մուֆլոն | bezoarian goat and the Armenian Mouflon


Խորհրդավոր քարանձավները, անկրկնելի գեղեցկության խորածորերը՝ կանյոնները, և փոքրիկ ձորակները, սոսիների ու մայրիների պուրակները, որոնցից ամեն մեկն ունի իր յուրահատուկ միկրոկլիման: Լեռնազրությունը ներկայացնում էն կրաքարային, ավազքարային, թերքաքարային և մերգելային ապարները: Արգելոց ծավալվում է Ազատ և Վեդի գետերի ավազանում՝ շրջապատված նրանց բազում վտակներով: Վայրի բնության հրաշալիքներն են ջրի և հանքային աղերի շնորհիվ ծևավորված բրզած աշտարակները և կանյոնները, դարավանդներից խանձաքար ժայռերի վրա գահավիժող փրկրած ալիքների աննման բնապատկերները: Ծովի մակարդակից արգելոցի լանդշաֆտի բարձրությունը 800-2000մ է, լեռնային գագաթների բարձրությունը՝ 2700-3000մ: Լեռնալանջերը պատված են հրաբխային շերտերով, որոնց օջախները Արագած և Գեղամա լեռնաշղթաների հրաբուխներն են: Արգելոց պատմամշակութային հուշարձաններից են Ազատի խորհրդավոր քարանձավները, Յավուց քաղի վաճական համալիրը, Աղջոց վանքը, Կանստանի (Իմրդելի) վանքի սրբագույն պատվածածին (XIII դար) Եկեղեցին, Գառնու հեթանոսական տաճարը, սուրբ Գեղարդի վաճական համալիրը, Կաքավարերոց (Քեղվա բերդ), Վիշապաքարերուն ու գեղաքանդակ խաչքարերը: Ժողովուրդը պատմում է, որ բարձունքի վրա կա խաչքար՝ հետևյալ փորագիր նախարարաւթյամբ. «Ես նայում եմ զանձին, զանձը նայում է ինձ»⁴⁴: Ժամանակին մարդկանց

towers and canyons formed from mineral salt and water residue. Waterfalls create foaming waves as they pour over the charred stones on steep slopes. The preserve's valleys are located at 800-2000m above sea level, while its mountain peaks range in height from 2700-3000m. The valleys originate from volcanic layers, which have eroded from the Arakadz and Keghama mountain chains.

Cultural and historical monuments still exist in the Khosrov Preserve, namely Kakavaberd fortress (Keghva fortress), Azat's meditative caves, Aghjots Monastery, Saint Mary's Church (8th century) of Vanstan or Imirzek Monastery, Havuts Tar Monastery, Garni pagan temple, Geghard Monastery Complex, dragon stones (*vishapakar*) and many ancient *khachkar* and carvings. It is said that there is a cross stone found at one of the peaks with the following inscription, "I look at the treasure, the treasure looks at me."⁴⁴ For years, people believed there are buried treasures in the area. After many difficult and fruitless searches, it was understood that the treasure was in fact the Khosrov forest itself, with its wild and unique beauty. According to tradition, King Khosrov's favorite daughter, Khosrovatukht's tomb is in the forest. Archeologists are still searching for the tombstone of the princess. It is said that the tomb's inscription may be read only at a particular angle under moonlight. Many fascinating engraved stones still lay hidden in the



{ Մասիս Տեսարան Խորհուր
արգելոցից... Խորհուր պատառները
եղել են զբուհական Վերապահակ
սրբելի որսատեղիները,
ինչուս ևս ծառայել են բանակի
շորապետությունների Հայար:



KHOSROV RESERVE WAS THE PREFERRED HUNTING DESTINATION OF THE ROYAL COURT, AND HAS ALSO PLAYED AN IMPORTANT ROLE AS A ROYAL MILITARY TRAINING SITE.



PHOTOS BY HRACHIA GHAZARYAN

Միջին մողես (վերև)
Իժ (ներքև)

Middle Lizard (top)
Viper (bottom)

Արգելության տարածքում
Հաշվառում է և ըստ 1849
Տեսակի բույսեր, որութեա
156-ը գրանցված են
Հաջորդագյուղում և
Տաւուտածու տեսակներ
Կարմր գործում:



թվացել է, թե այդ տարածքում գանձեր են բաղված: Երկար և ապարդյուն փնտրութեներից հետո ոչինչ չգտնելով՝ հասկացել են, որ գանձը հենց խոսրովի անտառն է՝ իր վայրի, անզուգական գեղեցկությամբ: Ավանդությունը պատմում է նաև, որ արգելոցում գտնվում է խոսրով թագավորի սիրեցյալ դստեր՝ Խոսրովիուսի գերազանց: Մինչ օրս հնագետները փորձում են գտնել արքայախտեր տապանաքարը, սակայն դա նրանց դեռ չի հաջողվել: Ասում են, որ այն գտնելու համար տապանաքարի գաղտնագրված գրությունը հարկավոր է կարդալ հատուկ անկյան տակ՝ միայն լուսնի լույսի ներոք: Թվերի ու ծառերի տերևների տակ կան հետաքրքիր արձանագրություններով բազում թարնված քարեր:

Արգելոցի կլիման չորային-կոնտինենտալ է: Համեղապում են չափավոր տաք, չափավոր ցուրտ, չոր-ցանաքային և բարեխառն կլիմայական տիպերը⁴⁵: Ամառվա ընթացքում ջերմաստիճանի բարձրացնան և տեղումների կտրուկ կրծատման արդյունքում բնությունը դառնում է միօրինակ, սակայն գարնանը և աշնանը արգելոցում ուղղակի հրաշալի է, քանի որ Ներուաշնակվում են կանաչող բուսականությունը, գուգավորմանը պատրաստվող գույնզգույն փետրավորում ստացած թռչունների և խայտարքեն թիթեռների, կամ էլ աշնանային տերևների բազմագեղ գուներանգները:

Խոսրովի անտառների մասին պատմում են V դարի հայոց պատմիչներ Մովսես Խորենացին և Փավստոս Բյուզանդոց: Որոշ տեղեկություններ կան նաև միջնադարյան այլ պատմիչների մոտ: Մատենագիրները փաստում են, որ ժամանակին անտառները տնկվել են հայոց Արշակունի արքայատոհմի թագավոր Խոսրով II Կոտակի (Կարծահասակ) կողմից՝ նրա գահակալման տարիներին՝ 330-338թթ: Անտառները գրանցեցին

forest under foliage and shrubbery.

Khosrov Preserve's climate is dry continental. It is the meeting point of moderate hot and cold temperatures, as well as dry and temperate climate conditions.⁴⁵ During the summer, hot temperatures coupled with reduced rainfall produce a monotonous landscape. However, during the spring and autumn months, the landscape becomes absolutely breathtaking. In springtime, the lush green plant life and wildflowers blend perfectly with the beautiful colors of butterflies and birds ready for mating season. Come autumn, the entire environment is altered to a picturesque scene of golden-red leaves.

Fifth century Armenian historians, Movses Khorenatsi and Pavstos Byuzand have written about the Khosrov forests. There are also additional documents from other historians of the middle ages. These historical texts note that the forest was planted from 330-338 AD by Armenia's King Khosrov II of the Arshakuni dynasty, who was also known as Kotak (meaning short). The forest was originally 3 to 4 times larger than it is today. According to these historians, the Arax river changed its course and moved away from the Artashat, which was the Armenian capital at that time, leaving the city with a serious water shortage problem. This situation also posed a military threat, as well as caused the formation of swamps which brought about epidemics to the inhabitants. For these reasons, King Khosrov took on the challenge of building a new capital city upon a nearby hill called Dvin,⁴⁶ where the royal family and a large majority of Artashat's population relocated. In order to make the climate of the new capital cooler and more productive, the King decided to plant a forest. He ordered the import

Են 3-4 ամգամ ավելի ընդարձակ տարածություններ, քան այսօր կան: Ըստ մատենագրության, Արտաշատ մայրաքաղաքի շուրջը ծնկած պտտվող Արաքս գետը փոխում է իր հունը և հեռանում քաղաքից, այդպիսով մայրաքաղաքը կորցնում է իր ռազմաստրատեգիական նշանակությունը, արդյունքում առաջանում են ճահիճներ, տարածվում են տարրեր համաճարակներ, հիվանդություններ, գարշահոտություն: Խոսրով արքան մոտակա բլրի վրա հիմնում է նոր մայրաքաղաք՝ Դվինը⁴⁶, ուր տեղափոխվում է արքունի վերնախավը և Արտաշատի բնակչության հիմնական մասը: Նոր մայրաքաղաքի կիման գով և կենսակերպի համար ավելի նպաստավոր դարձնելու նպատակով թագավորը կատարում է հիրավի սխրագործ աշխատանք: Նրա հրամանով տնկվում կան հարեւան և հեռավոր երկրներից բերվում են առողեն մի քանի տարեկան շուրջ մեկ միջին ժառեր: Ստեղծվում են երկու ընդարձակ, պարսպապատ անտառներ, որոնցից մեկը՝ Խոսրովակերտը, տնկվել է Արաքս գետի, Դվին և Արտաշատ քաղաքների միջև, իսկ մյուսը սկիզբ է առել Գառնի ամրոցից՝ հասնելով մինչև նոր արքայանիստ մայրաքաղաք Դվինի դյակներին և կոչվել է Տաճար Մայրի: Թեև այսօր ստույգ տեղեկություններ չկան, սակայն ենթադրում ենք, որ Տաճար Մայրին հավանաբար ծավալվել է իին հեթանոսական պաշտամունքային պուրակի վայրում, և պատահական չէ, որ այն տեղակայված է եղել Գառնի հեթանոսական տաճարի մոտակայքում: Թեև Հայաստանուն ծառերի պաշտամունքի⁴⁷ վերաբերյալ հստակ տեղեկություններ չկան, բայց ծառաստանների աստվածացնան վերապուլկներն անուղղակիորեն ակնհայտ են⁴⁸: Ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում,

and planting of around one million trees. Two large fortified forests were built. One of these forests, named Khosrovakert, was planted between the Arax river, Dvin and Artashat cities. The second forest begins at the temple of Garni, and reaches the castle of Dvin, which was also called "Cedar Temple." Even though there is no clear evidence, "Cedar Temple" probably encompassed an old pagan area of worship, and it is likewise not coincidental that the pagan temple of Garni is nearby. Regardless of the fact that there is no exact information about the worship of trees⁴⁷ in Armenia, the emphasis given to trees as part of the natural habitat is a clear sign that such worship may have existed.⁴⁸ Obviously there are some reminders of this even today. Throughout the world, as well as in Armenia, the cedar tree (*cedrus libani*) was often worshipped, because of its strong energy, passion inducing and unusual medicinal qualities.⁴⁹ In the

ALL IN ALL, THERE ARE 283 TYPES OF ANIMALS, 130 TYPES OF BIRDS, 30 TYPES OF SNAKES AND LIZARDS...

Անդրկովկասյան գորշ արջ | Caucasian Brown Bear



PHOTO BY HRACHIA GHAZARYAN

ծառատեսակներից պաշտվել է հատկապես մայրին (cedrus libani)՝ իրու հզոր էներգիայով օժտված, արտասպառ բուժիչ և սիրաբորբոք հատկություններ ունեցող ծառատեսակ⁴⁹: Այն հետագայում Յին Կոտակարանում վերահիմաստավորվել է որպես արքայի, նրա հարստության և փառքի, իսկ Նոր Կոտակարանում՝ ճշմարիտ հավատացյալի խորհրդանշ⁵⁰: Պատմիչների կողմից հիշատակվող խոսրովի անտարի մայրու պուրակի մասին տեղեկությունները պերճախոս չեն, բայց կարելի է ենթադրել, որ հայոց արքան միզուցե հերանոսական զորաց ծառաստանի վայրում շարունակում է սրբազն ավանդույթները, բնական գեղեցկությամբ, անուշահոտությամբ, բուժական հատկություններով օժտված մշտադալար մայրինները վերահիմաստավորելով իրու իր՝ Աստծո կամքը կատարող ճշմարիտ ուղղադավավանի աստվածատուր իշխանության, երկարակեցության, փառքի ու հարստության խորհրդանշներ: Խոսրով Կոտակը Եշանավորվել է նաև Յայաստանում նոր կենդանատեսակների ներմուծմամբ: Նա արևելքից բերում է վիետնամական գոմեշ, իսկ Պարսկաստանից՝ պուտավոր ընձառյուծ, որոնք լավագույն ընտելանում են Յայաստանի բնաշխարհին: Անտառներում են հավաքվում նաև Յայկական լեռնաշխարհին բնորոշ կենդանիներ՝ մուֆլոն, քարայծ, բեզոարյան այծ, վարազ, շնագայլ, հովազ, եղնիկ, արջ, ազնվացեղ եղջերու, որոնց գոյության մասին վկայում են նաև հայկական նախապատմական ժայռապատկերները: Խոսրովի անտառները եղել են արքունական վերնախավի սիրելի որսատեղիները, ինչպես նաև, ծառայել են բանակի զորավարժությունների համար:

Այսօր խոսրովի արգելոցի էկոհանակարգը խաթաված է: Անտառները դեռևս պարսկական և մոնղոլական տիրապետության ժամանակներից տուժել են բազում անտառահատումներից, ենթավայան գոտիներում անասունների արածեցման հետևանքներից: Այն նաև տուժել է մարդկային ներգործությունից: Խոսրով արքայի թողած ժառանգությունն անհրաժեշտ է պահպանել հոգատար, սրտացավ խնամքով: Իրականացվում են մի շարք միջոցառումներ⁵¹ խոսրովի գողտրիկ արգելոցը ճանաչողական, պատմամշակութային և էկոտուրիզմի նպատակներով օգտագործելու, բնական և գենոֆոնդային պահպանության, գիտահետազոտական ուսումնասիրությունների ուղղություններով: 

Old Testament the cedar tree symbolized the king or his wealth and prosperity.⁵⁰ The New Testament equates the cedar to a truthful and worthy believer.

While there is no detailed historical data on Khosrov's cedar trees, it is safe to postulate that the Armenian king wished to continue practicing sacred traditions in this cedar grove formerly worshiped through pagan sacrament. Perhaps this was done under the illusion that the cedars symbolized natural beauty and gave medicinal benefit, only by the grace of God. In fact, this tree was associated with a longer and healthier life, wealth and prosperity through the will of God. Khosrov Kotak was also known to have imported a wide variety of animal species into Armenia. He brought the Vietnamese buffalo and Caucasian spotted leopards that integrated so well with the Armenia wildlife. Other animals were gathered by the King from within Armenia such as the mouflons and bezoar goats, red foxes and bears. Khosrov Reserve was the preferred hunting destination of the royal court, and has also played an important role as a royal military training site.

Khosrov Preserve's ecosystem has been damaged over the centuries. The forest endured heavy destruction from the Persian and Mongol invasions, mostly to create fields for grazing their sheep herds. Today, the forest continues to suffer the abuse of mankind. It is imperative to preserve and cherish this valuable heritage passed down to us from the time of King Khosrov. Several initiatives⁵¹ have been proposed to safeguard the forest and raise awareness of its historical and cultural significance through exclusive ecotourism activities as well as research and conservation programs. 




PHOTO BY HRACHIA GHAZARYAN



PHOTO BY HRACHIA GHAZARYAN

Սբ. Ստեփանոս տաճար (վերև), խաչքար, Խոսրովի անտառ, ճարտարապետական համալիր (ներքև)
St. Stephanos Cathedral (top); Khachkar, Khosrov Forests, Architectural Complex (bottom)



Անման ես գեղատեսիլ
Ժայռերու ոՒ ԶՐՎԵՄՆԵՐՈՒ,
ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՔԱՐԱՆՉԱՎՏԵՐՈՒ,
ԽԱՎԻԿԱՆԵԼԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ
ԽՈՐԽՈՐԵՐՈՒ՝ ԿԱՋՈՒԱՆԵՐՈՒ և
ՓՈՔԻՒԿ ԶՈՐԱԿԱՆԵՐՈՒ...



ALL PAGE PHOTOS BY HRACHIA GHAZARYAN

Կովկասյան ջրասամույր (վերև), Կովկասյան հովազ (ձախից), Քարարծիվը հոշոտում է փասիանին (աջից)
Caucasian Otter (top); Caucasian Leopard (left); Golden eagle preys on a pheasant (right).

Անդատային ֆլորա

Անտառային ֆլորան կազմում է չոր, լեռնային բուսականությունը (frigana)⁵²: Արգելոցի տարածքում հաշվվում են շուրջ 1849 տեսակի բույսեր, որոնցից 156-ը գրանցված են հազվագյուտ և անհետացող տեսակների Կարմիր գրքում: Ամենատարածված ծառատեսակներից են մայրին, թթվին, բարդին, գիշին, լայնատերև կեշին, կենին, արոսենին, բռնչենին, վայրի տանձենին: Անում են հարյուրամյա կաղնիներ, խոտաբույսերի և մամուռի հազվագյուտ տեսակներ, գույնագույն ծաղիկներ: Կան 125 տեսակի սմկեր, որոնցից ուստի է շուրջ 37-ը: Շատ են հատկապես դեղաբույսերը, եթերային և բուրումնավետ բույսերի տեսակները:

Այսօր արգելոցի զարիվայր, թեք լանջերին ու խոնավ բացատներում ապրում են հայկական ոչխար մուֆլոնը, բեղոարյան այծը⁵³, եղնիկներն ու կիստարները, ազնվացեղ եղջերուն, կարմիր աղվեսը, գայլը, գորշ արջը, վայրի խոզը, եվրոպական նապաստակը, ջունգլիների վայրի կատուն, եվրասիական լուսանը, կովկասյան ընձայուծը⁵⁴, առաջավորասիական հովազը, կզաքիսները և աքիսները: Յաճախ հանդիպում են ոզնիներ, մացառախոզուկներ և չղջիկներ, դեղին, սև, խայտարդետ կարիճներ: Արգելոցում ընդհանուր առնամբ կան կենդանիների շուրջ 283, թռչնաշխարհի 130⁵⁵, ձկների 10-11 տեսակներ: Օձերի և մողեսների քանակությունը մերկայանում է 30 բազմատեսակությամբ:



Բվեճի ձագուկ
Baby Owl



Այծկիր
Eurasian Nightjar



Սև ամողի ձագ
Eurasian Black Vulture

ALL PAGE PHOTOS BY HRACHIA GHAZARYAN

Fauna & Flora

The flora consists primarily of plants suited to dry mountain climates,⁵² and high river valleys. There are 1,849 different plants species in Khosrov reserve, of which 156 have been recorded and registered in the Red List of Armenia's rare and endangered species. The most common trees are the pine, linden, poplar, juniper, the wide leaf elm and oak, as well as the wild pear. There are century-old oak trees, rare plants and colorful wildflowers. Khosrov Reserve boasts 125 different types of mushrooms, of which only 37 are safe to eat. There are many medicinal, ethereal, and scented plants too.

Today, Khosrov National Reserve is inhabited by Armenian mouflons (sheep) and bezoar goats,⁵³ deers and stags, red foxes, wolves, bears, wild boars, European hares, wild jungle cats, Eurasian lynx, Causasian leopards,⁵⁴ Asian panthers, martens and weasels. Porcupines, bush pigs, and bats are often found in these forested lands, as well as yellow and black scorpions. All together, there are 283 types of animals, 130⁵⁵ types of birds, 30 types of snakes and lizards, and about 10-11 types of fish in this forest.



Պիղեղասուն
Milk Mushroom




Կապար
Capers



Զննիկ
Snow Drop

ALL PAGE PHOTOS BY HRACHIA GHAZARYAN





«Սահմանի ին»

{ Sanahin }



ԱՄԱՎԾՈԾԱՎ ՉՈՐԻ ՉՈՐՎՅԱ ՍԱՆԱՀԻՆ

Mighty Sanahin, the Older of Two

Եթե գետի խորունկ կիրճի Աստվածածնաւ և Սաղու ծորերում՝ Չարին լեռան անտառապասս փեշերին է տարածվում Սանահինի հրաշակերտ վանքը, որ «մինչեւ ցայսօր զարմացուցանէ զտեսմողս⁵⁶»: Վանքը երեք կողմից շրջապատված է գյուղական տնակներով, իսկ հարավից՝ գերեզմանատներով:

Ըստ ավանդության, Քրիստոսի Բարդուղիմեոս առաքյալը գալիս է Շայաստան և հասնելով Ասձևա գավառ՝ լսում մի քարի համբավի մասին, որտեղ բազում դևեր են բնակվում: Շալածելով չար ուժերին և փշրելով կուռքերը՝ առաքյալը մի փոքրիկ քարե խաչ է կանգնեցնում լեռան վրա՝ վերջ դնելով դևերին⁵⁷: Դետագայում սուրբ հայրապետ Գրիգորը այդ առաքելական խաչը շրջեցնում էր իր հետ ողջ Շայաստանով ու ծգողականության և հոգևորության հասուլ դաշտերում շինված հերանոսական մեհյաններն ավերելով՝ նրանց տեղում կանգնեցնում էր նախ զորավոր խաչը: Պատմիչները վկայում են, որ Սանահինի վանքը նույնպես կառուցվել է Խ դարում, Գրիգոր Լուսավորչի կողմից խաչով մատնաշված սրբազն վայրում: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Խ դարի սկզբներում բյուզանդական

THE SPECTACULAR MONASTERY of Sanahin spreads along the forested slopes of Mt. Chatin, over the deep canyon of the Debed River, amazing the visitor even today.⁵⁶ The monastery complex is neighbored by village homes, with an interesting historic cemetery above it.

According to legends, the Apostle Bartholomew came to Armenia and upon reaching Andzevants province he learned about a rock where numerous demon lived. The Apostle drove the evil forces away, shattered their idols and raised a small stone cross on the mountain, thus putting an end to the dragons.⁵⁷ St. Gregory the Illuminator later carried this apostolic stone all around Armenia, demolishing the pagan shrines built in spiritual and holy places, and, for the first time raised the miracle-working Cross at these sites.

Historians believe that Sanahin monastery was founded in the 4th century at the sacred location marked by St. Gregory's cross. Historian Kirakos Gandzaketsi wrote that in the early 10th century a group of Armenian clergymen, known as the "Horomeans" (Romans), ruthlessly persecuted for



Սանահինի սրբ. Աստվածածին եկեղեցին | Saint Mary's Church of Sanahin



PHOTOS BY RAFFI KOJIAN

Ռոմանոս I կայսեր կողմից իրենց հակաքաղերոնական դավանանքի համար դաժանաբար հալածվելով՝ Սանահին են զայիս ժողովրդի կողմից «հոռոմացիներ» անվանված մի խումբ հայ կրոնավորներ և Սանահին գյուղում Բագրատունյաց Արքա արքայի օրոր (928-953թթ)⁵⁸, իիմնադրում են համալիրի ամենահին և առաջին՝ սուրբ Աստվածածին եկեղեցին⁵⁹: X-XIII դարերի ընթացքում համալիրը հոչակվում է եպիսկոպոսանիստ քաղաք և ձեռք բերում Գուգարքի հոգևոր կենտրոնի նշանակություն:

Համալիրի ներսում է գտնվում եռահարկ զանգակատունը, որն առանձին կանգնած մոնումենտալ զանգակատների առաջին օրինակն է հայկական ճարտարապետության մեջ: Վանքի ողջ տարածքում և շինությունների ներսում կան շուրջ հիսուն անգույզական խաչքարեր:

Սանահինի պատմությունը և շինարարությունը⁶⁰, սկսած ամենաառաջին՝ սրբ. Աստվածածին եկեղեցուց, մինչև ամենավերջին՝ ընդհանուր համայնապատկերում


their anti-Chalcedonian faith by Emperor Romanos I of Byzantium came to Sanahin village. Here in the reign of King Abbas of Bagratuni dynasty (928-953),⁵⁸ they built the Church of St Mary⁵⁹ the oldest one remaining in the compound. In the 10th-13th centuries the monastery was the patriarchate and became the spiritual center of Gugark province.

Within the compound, there is a three-storied bell tower, the first free-standing bell-tower in Armenian architecture. There are about fifty noteworthy cross-stones to be seen all over the monastery complex. The erection of Sanahin,⁶⁰ from the first edifice, the Church of the St. Mary, to the last building, the dominating bell-tower, was carried out during the reign of three royal dynasties, over three hundred years in thirteen phases of construction. The monastery saw numerous disasters, plunder and pillage, and has seen rebuilding and redesign many times.

Վասք ողք
Տարածքում և
Շրաբությունների
Ներսում կան շուրջ
Հրանու անշուգական
Խաչքարեր:


Խաչքար Սանահինում, 1916 թ.

Khachkar in Sanahin, 1916



{ Սրբաւ Խորշերուն նատել են
աշակերտաւրը, իսկ Հօնոր որդաւ-
տոյիաւրը և Խաջովո Կամարները
Կառույթին Հաղորդուիս են յուրօրինակ
Արտաշայտապատճեյուն և Իսկական
գիտական Կաճառի Տեսք:





THE STUDENTS WERE SEATED IN
THE NICHES, THE POWERFUL PYLONS
AND CROSSING ARCHES IMPARTING
UNIQUE EXPRESSIVENESS TO THE
BUILDING AND THE APPEARANCE OF
A GENUINE SCHOLARLY TEMPLE.



PHOTO BY ARSINEH KHACHIKIAN

գերիշխող զանգակատունը, իրականացվել է Երեք հշխանատոհմերի օրոր և Երեք հարյուր տարվա ընթացքում ընդգրկել տասներեք շինարարական փուլ, իսկ մինչև մեր օրերը, Ենթարկվելով բազում արհավիրքների, ավեր ու թալանի, անցել բազմաթիվ վերանորոգումների և վերածնափոխումների միջով:

Կապտամոխագույն բազալտից կառուցված Սր. Աստվածածին Եկեղեցին (930-940թ.)՝ իր ճարտարապետությամբ կարևորագույն անցումային օրինակ է զմբեթավոր դահլիճի և Երկայնական ծգված խաչածն զմբեթավոր Եկեղեցու տիպերի համար: Եկեղեցու զմբեթավոր կամարների անկյունները հարդարված են խոյի, ցուլի, եզան և մարդկային գլուխներով, որ արտակարգ տպավորություն են թողնում: Եկեղեցու արևելյան պատին կից բաղաձածկ սրահները կյուրիկյան հշխանատոհմի ներկայացուցիչներ Գուրգեն հշխանի, Դավիթ Անհողինի և բարձրատոհմիկ այլ հշխանների դամբարաններն են:

The oldest edifice in the compound is the church dedicated to the St. Mary's (930-940), built of bluish rough-hewn basalt. In terms of architecture, it is significant as a transition from the domed hall to the rectangular cross-domed church. The corners of the domed arches are ornamented by impressive heads of rams, oxen, buffalos and humans. The mausoleums of Prince Gurgen, David Anhoghin and other representatives of the Kurikian princely family are in vaulted chambers at the eastern wall of the church.

The construction of another dominant church, the cross-domed Amenaprkich Katoghike, dating back to 966, was sponsored by King Ashot III the Merciful and his wife Queen Khosrovanuysh for the long and prosperous lives of their sons. Son Smbat succeeded the crown and reigned at the Ani Bagratuni throne as King Smbat the Conqueror and son Kurike founded the Armenian kingdom of Tashir-Dzoraget.

Խաչաձև-զմբեթավոր Եկեղեցի է նաև համալիրում գերակայող 966թ. Աշոտ Գ Ողորմած արքայի և նրա տիկնոց՝ Խոսրովանույց թագուհու հովանավորությամբ կառուցված սր. Ամենափրկիչ Եկեղեցի՝ նրանց զավակների՝ Սմբատի և Կյուրիկի արքատության համար: Կյուրիկեն բարեպարային ծևով Գուրգեն անունը է: Իշխան Գուրգենը սկիզբ է դրել Տաշիր-Զորագետի հայկական թագավորությանը, իսկ Սմբատ իշխանը ժառանգում է գահը և թագավորում Ամիհի Բագրատունյաց արքունի իրեն Սմբատ Տիեզերակալ արքա: Նրա արքայական հատուկ հրովարտակով Ամենափրկիջը հոչակվում է համալիրի Կաթողիկե նայ Եկեղեցի, իսկ Սանահինի համալիրը, իրեն բացառիկ շնորհ, ազատվում է հարկերից և դառնում եպիսկոպոսական նստավայր: Եկեղեցու արևելյան ճակատի ուղղանկյուն շրջանակով Երիզված քարի վրա Սմբատ և Կյուրիկե Բագրատունյաց իշխանների դեմ-դիմաց կանգնած բարձրաքանդակն է՝ Եկեղեցու գողտորիկ մանրակերտը հպատ և նվիրաբերական դիրքով ծեռքերում պահած: Դուռատորական (նվիրաբերական) պատկերագրությամբ այս բարձրաքանդակը երկրորդ հարթաքանդակն է Արևմտյան Յայաստանի Արթամար կղզու սր. Խաչ Եկեղեցու՝ Քրիստոսի և Գագիկ Արծրունու պատկերաքանդակից հետո: Ամենափրկիչ Եկեղեցու արևմտյան կղզում կցված է զավիթը, որի զանգվածեղ չորս սյուները սիմետրիկորեն դասավորված են կառույցի առանցքի նկատմամբ և վարպետորեն հարդարված զամբյուղահյուս և կենդանակերպ գլուխների բարձրաքանդակներով: Սյուներից մեկի վրա կա նաև ճարտարապետի անունը՝ ժամհայր, իսկ այսուներից ամեն մեկը խորիդանշական նապատակով հիմնել են արքունի տիկնայր՝ Մարիամը, Բավրինան և Երկու Ռուսուգանները⁶⁵. Գավիթի հարավում ցածրադիր գոլոյց կամարաշարերով ուղղանկյուն նախագավիթն է, որի երկանց երեք կտորների տակ է առնված եռանավ սրահը՝ իշեցնելով միջնադարյան պալատական սյունազարդ դահլիճները: Նախագավիթը ծառայել է որպես ուսումնական հաստատություն, հավաքատեղի, բարձրաշխարհիկ դասի հանգուցյաների տապանատուն:

1061թ. Յանուշ թագուհու կողմից սրբատաշ քարերից կառուցվում է սր. Գրիգոր Լուսավորիչ

ARCHITECTS SAY
THAT THE
PILLARS OF THESE
CHURCHES WERE
SPECIALY DESIGNED
TO WITHSTAND
EARTHQUAKES.

By a special decree of King Smbat II Bagratuni, the church of Amenaprkich Katoghike was proclaimed the Cathedral of Sanahin and the latter, as an exceptional privilege, was exempted from taxes and became the residence of the Archbishop. Princes Smbat and Kurike Bagratuni are depicted face to face in a rectangular stone frame on the eastern facade of the church, proudly and gratefully holding a replica of the church. This is the second high-relief motif at an Armenian monastery depicting the act of donation, the first being the one iconography of Jesus and King Gagik Artsruni on the wall of the Holy Cross church on the Isle of Aghtamar in Western Armenia.

On the western side of the Amenaprkich Katoghike church, there is an atrium with four massive pillars placed symmetrically along the axis of the building and thoroughly adorned by basket-shaped and animal themed high-reliefs. The name of the architect, Jamhayr, is written on one of the pillars. Each pillar was, for symbolic purposes, founded by the women of the royal family, Mariam, Bavrina, and two Rusugans.⁶¹ At the southern end of the atrium, there is a low rectangular twin-vault entrance hall with a three-nave room under three ridge roofs. It resembles a medieval palace with a pillared hall. The entrance hall served as an educational institution, gathering place and a church yard for the nobility.

Queen Hranush founded the center-domed church of St. Gregory the Illuminator, which was built of smoothly hewn stone⁶² in 1061. The church has a cross-shaped, four-niche layout, outwardly giving the illusion of a rotunda. An arcade connects St. Gregory the Illuminator church with Amenaprkich Katoghike, which has no analogue in Armenian architecture. It was also founded in the lifetime of Queen Hranush, in 1063. The building was used as a repository of relics and valuable manuscripts.⁶³ It is the earliest non-secular building of its kind to use the roof design known as “hazarashen,” borrowed from the traditional country house. The four dome-bearing pillars symbolize the sciences. There was also a rostrum from which theological speeches were voiced in the Middle Ages. The architecture of this civilian building

Սա-նա-հին

Սահմանական անունը զալիս է «սա զնա իին» ժողովրդական խոսքից: Զնա՝ նրանից ասելով՝ ժողովուրդն ի նկատի է ունեցել Հաղպատի գեղեցկագույն վանքը: Հաղպատ անունը ստուգաբանվում է որպես ամուր պատ: Հնջյունափոխվելով անունը դարձել է «Սահմանական», և գյուղը վանքի անվամբ սկսել են այդպես կոչել: Սահմանական գյուղը վաղ երկարի դարաշրջանի մշակույթի հնագույն օջախներից մեկն է, ուր բարձր զարգացման է հասել խեցեգործությունը: Պեղումների ժամանակ հաստատագրվել է զարդանախչ խեցեղեն անորմների, սափորների և կարսաների մեջ քանակություն⁶², ուստիև, վայրը ժողովրդի կողմից անվանվել է նաև «սամ-իին», որ ստուգաբանվում է որպես «իին կարսա»⁶³:

Պարսպապատի ներսում արևելք-արևմուտք երկայնական առանցքի նկատմամբ ասիմետրիկ փոխդասավորված են X-XIII դարերուները՝ սր. Աստվածածին, սր. Գրիգոր Լուսավորիչ, Ամենափրկիչ Կաթողիկե երեք եկեղեցիները, Զշխարասունմատենադարանը, քացարիկ գեղեցկության զավիքը և նախագավավիքը, Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը, միջնադարյան հայտնի փիլիսոփա և վանքի հոգևոր առաջնորդ Գրիգոր Տուտերդու մահարձանը (1184թ.): Պարսպաներից դուրս՝ մոտակա շրջակայրում, կառուցվել են սր. Կարապետ, սր. Հարություն, սր. Հակոբ եկեղեցիները, սր. Սարգսի մատուռը, Կյուրիկյան, Զաքարյան և Երկայնաբազուկ-Արդության⁶⁴ իշխանատուհների դամբարանները: Դամբարաններն արված են մուտքերի առջև՝ ոտքի տակ՝ հասուկ դրանց վրայով քայլելու համար, հանուն քրիստոնեական խնարհության և այն զաղափարաբանության, որ նախնաց ուկորների և թողած ժառանգության հիմքի վրա պետք է բարձրանա սերունդների հետագա պատմությունը: Դիշտակման արժանի է, որ վանքի ներսում գտնվում է Իվանե և Զաքարի իշխանների հոր՝ Սարգսի իշխանի դամբարանը՝ վրան 1187թ. գեղաքանդակ խաչքարը:

Sa-na-hin

Villagers will tell you that "Sanahin" translates to "this-older-than-that." By "that" the people meant the picturesque Haghpat monastery. The name "Haghpat" in turn translates to "strong wall." Eventually, the village of Sanahin took on the name of its famous monastery. This village was an early Iron Age cultural center where the art of pottery was highly developed. Excavations uncovered ornamented ceramics, jugs and numerous cauldrons;⁶⁴ hence the place was referred to by the local people as "san-hin" or ancient cauldron.⁶⁵

On an east-west axis inside the walled compound are the three asymmetric 10th-13th cc churches of Saint Mary's, St. Gregory the Illuminator, and Amenaprkich Katoghike, which housed a scriptorium and holy relics. The monastery complex also has an exceptionally beautiful atrium and an entrance hall, an academy founded by Grigor Magistros, and the tombstone of the abbot and medieval philosopher Grigor Tutevordi (1184). Beyond the walls, St. Karapet church is dedicated to St. John the Baptist, St. Harutyun to the Holy Resurrection and St. Hakob to St. Jacob. In addition to the churches there are St. Sarkis chapel, and the mausoleums of the Kurikian, Zakarian and Arghutian "Long Arm" princes.⁶⁶ The sepulchers are purposely placed at the entrance, to be trodden on. This serves as a symbol of Christian humility, in accordance with the philosophic belief that the future generations shall build up their history on the ashes and legacies of the ancestors. Also noteworthy is the magnificent cross-stone (*khatchkars*), dating back to 1187, erected indoors at the grave of Prince Sarkis, father of Princes Ivane and Zakare.

Յաղպատի վանքը
Շույնավես սկսել
Եօ կառուցել
Խոսրովանույշ
Քազուհու
պատվերով և
մշտապես
հովանավորել
արքունիքի
կողմից:

The monastery of Haghpat was also built by the request of Queen Khosrovanoosh with the sponsorship of the Arkunik dynasty.



PHOTO BY ARSINEH KHACHIKIAN



PHOTO BY ARSINEH KHACHIKIAN

կենտրոնագմբեթ եկեղեցին⁶⁵, որը հատակագծված է խաչաձև-քառախորան հորինվածքով, սակայն արտաքինից կարծես կլոր եկեղեցի լինի: Սր. Գրիգոր եկեղեցին բաղաձած ունեցող սրահի միջոցով կապված է հայկական ճարտարապետության մեջ զուգօրինակը չունեցող նշանառություն-մատենադարանի հետ, որը նույնականացնելու համար ամփոփվել է Հրանուշ թագուհու օրոք՝ 1063թ., և այնտեղ ամփոփվել են սրբություններ ու արժեքավոր ծեռագրերը⁶⁶:

Այն իր տեսակի աշխարհիկ շինություններում վաղագույնն է, որի ծածկում կիրառված են ժողովրդական հազարաշն տների ծածկի կառուցման սկզբունքները: Գմբեթակիր չորս սյուները խորհրդանշում են գիտությունները: Այստեղ եղել է նաև հոեսորական ամրինն, որտեղից հնչեցվել են միջնադարյան դաւանաբանական ելույթները: Քաղաքացիական կառույցի

ճարտարապետությունը կատարելապես համահունչ է համալիրի կրոնական կառույցներին: Գրատան հորինվածքում հաշվարկված են լուսավորության, օդափոխության և ջերմակայունության այն բոլոր խնդիրները, որոնք կարևոր են ծեռագիր մատյանների հոգատար պահպանության համար:

Սր. Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցների միջև կա աշխարհիկ բնույթի ուղղանկյուն, նեղ սրահ, որը հանդիսանում է ժամանակի հոչակավոր աստվածաբան, փիլիսոփա Գրիգոր Մագիստրոս Պահլավունու բարձրագույն հոգևոր համալսարան-Ճեմարանը: Սրահի խորշերում նստել են աշակերտները, իսկ հզոր որմնամույթերը և խաչվող կամարները կառույցին հաղորդում են յուրօրինակ արտահայտչականություն և խևական գիտական կաճախ տեսք: Եթե միջնադարում արգելվում էին դիահերձումները, ապա Սանահինի հոգևորականները բացառիկ բույլավություն ունեին զբաղվելու բժշկությամբ, դիահերձումներով և մարդու օրգանիզմի ուսումնասիրմամբ:

Այստեղ են ճգնել, ուսանել և ուսուցանել միջնադարյան կարկառուն աստվածաբան-փիլիսոփաներ Անանիա, Յակոբ, Շովիաննես Սանահինցիները, Գրիգոր Տուտերդին, Գրիգոր Մագիստրոսը, Սայաթ-Նովան:

Ինչպես հայոց բոլոր վանքերը, այնպես էլ Սանահինն իր ճարտարապետությամբ ծոված է բնական որթմերին: Բնության գեղեցիկ ամայնա-

is in harmony with that of the religious compound. The design of the library solves the problems of lighting, ventilation and stable temperature that are crucial for the thoughtful conservation of manuscripts.

There is another secular construction between the St. Mary and Amenaprkich churches, a narrow rectangular hall that used to be the higher spiritual school founded by the greatest philosopher and theologian of his time, Grigor Magistros Pahlavuni.

The students were seated in the niches, the powerful pylons and crossing arches imparting unique expressiveness to the building and the appearance of a genuine scholarly temple. When autopsies were prohibited in the Middle Ages, the clergy of Sanahin were granted an exceptional permit to practice medicine, autopsy and examination of human organs. Such outstanding philosophers and

theologians as Anania, Hakop, and Hovanes of Sanahin, Grigor Tutevordi, Grigor Magistros, and Sayat Nova served, studied and taught here.


As is the case with all the Armenian monasteries, Sanahin's architecture is in tune with its surroundings. The basalt bridge built in 1192 by order of Queen Vaneni in commemoration of her untimely deceased spouse King Abbas fits naturally into the beautiful scenery. Among single-span bridges of Armenia, this has the widest span, 18 meters, connecting the banks of the Debed River.⁶⁷

The interiors of all three churches built within the compound were adorned by murals which are in poor condition today. The delicate and tasteful ornamentation of the entrances and windows, floral capitals, adorned arches, frames and pylons and the majestic heavenward domes, which were all the more impressive in the middle ages, are fascinating. Although the layout of the compound is asymmetrical, all the structures are monumental and streamlined, built in harmonious proportions. According to historians, there were columns which spanned and thus drew altar curtains in monasteries. Architects tell us that the pillars of these churches were specially designed to withstand earthquakes.

The individuality of Armenian architecture shows

Ինչու Հայոց բոլոր
Վաւերը, այսու է
Սահական Իր
ճարտարապետությայը
Չոփած է բաւարարություններին:
Տարածի բարօն
Խոնավորական Կրոնի բարությունը
Պատերի ողջ երկարությանը:





Սահմանական հատակագիծ | Floor plan of Sanahin

պատկերը լրացնում է XIIդ. բազալտակերտ կամուրջը՝ 1192թ. կառուցված Վանենի բազուիու պատվերով՝ նրա վաղամեռիկ ամուսնու՝ Արքաս արքայի հիշատակին: Դայաստանի միաբռնչք կամուրջների մեջ այն ունի ամենամեծ թրիքը, որ 18 մետր բացվածքով միացնում է Դեբե գետի երկու ափերը⁶⁷:

Համալիրի ներսում կառուցված բոլոր երեք եկեղեցիների ներին հարդարանքում եղել են այսօր արդեն վաստ պահպանված որմնանկարներ: Դիացնում է համալիրի արտաքին տեսքի՝ շրամուտքերի և պատուհանների նրբաճաշակ, տեղին և չափավոր զարդարանդակները, բուսազարդ խոյակները, գեղարձանակ կամարաշարերի, եզրակացների և որմնամույթերի հարդարանքը, վեհաշութ, երկնասլաց զմբերները, որոնք միջնադարում շատ ավելի տպավորիչ և գեղեցիկ են եղել: Զնայած համալիրի հատակագիծի ասիմետրիկ նոտեցումներին՝ բոլոր շինություններում իշխում են համամասնությունների ներդաշնակ, փոխկապակցված հարաբերումները՝ շեշտված սլաքիկ, մոնումենտալ լուծումներով: Պատմիները հիշատակում են, որ վանքերում եղել են սյուներ, որոնք պտտելիս, բացվել են բեմի վարագույրները: Սյուները կառուցվել են հատուկ հաշվարկներով, որպեսզի երկրաշարժերի ժամանակ որոշ սեպեր միայն ցած ընկնեն, իսկ ամբողջական սյունը մնա անսասան:

Հայկական ճարտարապետության յուրօինակությունը ի հայտ է գալիս Սահմանականի և նրանից ընդհանումը

in the use of spaces, building methods, and similarity of construction materials used at Sanahin and Haghpat (3 km away). Both monasteries share common chronology⁶⁸ and similar fates, but at the same time each possesses unique and enchantingly distinctive features. The construction of Haghpat monastery was also commenced by order of Queen Khosrovanush and continuously sponsored by the royal court. Sanahin and Haghpat used to be major centers of religion, culture and learning, owners of rich estates and beneficiaries of donations. They continuously competed with each other for dominance. According to some sources, the renowned architect Trdat, the builder of churches in Ani, also contributed to the design of Sanahin and Haghpat.

Sanahin and Haghpat fascinate us with their refined creative solutions, harmonious arrangement of secular and religious edifices and the prevalence of civilian buildings in the compounds. Both monasteries served as exceptional models for the further development of medieval Armenian architecture in terms of spatial balance in asymmetric layouts and the elements of interior and exterior ornamentation (monumental portraits, murals, records, bas-reliefs), and the wealth of highly evolved cross-stones.

For centuries Sanahin survived enemy attacks and natural disasters. It has withstood the upheavals of time. Although a UNESCO protected monument, Sanahin is now threatened by the Oriental Hornbeam plant ("ghajji" in Armenian). Due to the high humidity of the climate, this weed has made its way along the entire surface of the monastery drilling holes in its masonry and walls, threatening the integrity of this powerful marvel of Lori. ☸

Հայկական մատուռով

Կատուրաների մեջ պահ

ունի ամենամեծ թուաքը,

որ 18 մետր բացվածքով

մատառում է Դեբեդ

գետի երկու ափերու:

Երեք կմ հեռու գտնվող Յաղպատի վանական համալիրների ճարտարապետության, կառուցման հնարքների և նյութի, նրանց պատմական ծակատագրերի մերձեցնան⁶⁸, և, միաժամանակ, ամեն մեկի բացառիկ ինքնատիպության հմայքում: Յաղպատի վանքը նույնպես սկսել են կառուցել խոսրվածույշ թագուհու պատվերով և մշտապես հովանավորել արքունիքի կողմից: Սանահինը և Յաղպատը համեստացել են Եպիսկոպոսական կամ թեմական, մշակութային-գիտակրթական կարևորագույն կենտրոններ, հարուստ նվիրատվություններ ու կալվածքներ են ունեցել, նաև առաջնայ-նության համար մշտապես նրգակցել են միջյանց հետ: Պատմում են, որ Սանահին-Յաղպատի ճարտարապետներից է եղել Անիի Եկեղեցիների կերտման դափնեկիր Տրդատը: Սահանինը և Յաղպատը հայկական միջնադարյան ճարտարապետական առանձնահատկությունների հետագա զարգացումների համար համեստացել են բացառիկ ննուշօրինակներ՝ թե ասիմետրիկ:

հատակագծերում տարածական ներդաշնակ հավասարակշռություն ստեղծելու, և թե ներքին և արտաքին հարդարանքի տարրերով (կտիտորական մննումնենտալ պատկերաբանդակներ, որմնանկարներ, արձանագրություններ, հարթաքանդակներ):

Դարեր ի վեր Սանահինի համալիրին չեն կարողացել վնասել ոչ ահարկու թշնամիները, ոչ բնական արհավիրքները, և այն կանգուն է մնացել ժամանակի վայրիվերում-

ներում: Սակայն Սանահինը մեր օրերում լուրջ թշնամի ունի: ՅՈՒՆԵՍԿՕ-ի բացառիկ պահպանության կարիք ունեցող հուշարձանների շարքին դասված համալիրը հիրավի վտանգված է ղաֆի բույսի պատճառով: Տարածքի բարձր խոնավության արդյունքում ղաֆին աճում է Եկեղեցիների պատերի ողջ երկայնքով: Այն պարբերաբար հեռացվում է, սակայն քարերում ճաքեր առաջացնելով՝ լրջորեն

սպասում է թագավորաշունչ անզուգական վանական համալիրի հուշարձանների ամբողջականությանն ու գոյությանը: ☩

SANAHIN'S ARCHITECTURE
IS IN TUNE WITH ITS
SURROUNDINGS... DUE TO
THE HIGH HUMIDITY OF
THE CLIMATE, "KHAJİ"
HAS MADE ITS WAY ALONG
THE ENTIRE SURFACE OF
THE MONASTERY...

« Ալոք Հայուսանունի »

Խաչատր Աբովյան


Լոռվա ամեն մի քար գիրք է, ամեն
ապառաժ՝ պատմություն,
ամեն մի հիմ բերդ, մասուռ և
Եկեղեցի՝ կենդանի վարժապետ, իսկ
Սանահինա և Յաղպատի վանքերի
պատերը՝ խոսուն վարժատում⁶⁹:

Armenia's Wound

Khachatur Abovyan


Every single stone in Lori is a book,
every single cliff, a story,
every ancient fort, chapel and church,
a living tutor, and the walls of
Sanahin and Haghpat monasteries,
talking schools.⁶⁹





«Սմբատաբերդ»

{ Smbataberd }



Սյունիքաց Զորաց Հենակետ Սմբատաբերդ

Smbataberd, the Mighty Fortress of Syunik

Ծատ են հայոց պատմական բերդերը, հազարավոր: Քայաստանը ոչ միայն քարերի, այլև քարերդամրոցների աշխարհ կարելի է անվանել: Այս՝ այնպիսի երկրի համար, ինչպիսին մերն է, բնական է, որ գոյության պայքարի և բնական ընտրության արդյունքում պետք է մշակվեին պաշտպանության հուսալի մեխանիզմներ, հետևաբար այնտեղ, որտեղ բարձր լեռներն ու անդունդներն այլևս չեն պաշտպանում, կառուցվում էին բերդեր և վանքեր՝ իրու անարիկ պատսպարաններ: Քայաստանի յուրաքանչյուր գյուղ, ավան և քաղաք ունեցել է իր հզոր, պարսպապատ բերդը: Ուշադիր ընթրցողը կնկատի նաև, որ հայոց իհնավուց վաճեցեն ել կարծես բերդեր են՝ կառուցված անմատչելի բարձր տեղերում՝ պաշտպանված բնական լեռներով ու անդնդախոր ձորերով՝ հանդիսանալով դժվարամատչելի պարսպապատ ապաստարաններ:

Եվրոպայի զանազան երկրներում խոյանում են հորսնեական և միջնադարյան շրջանից պահպանված բազմաթիվ ամրոցներ, բերդեր, դյակներ, որոնք այսօր խնամքով բարեկարգված են՝ ներկայանալու իրենց երեմնի փառքով ու ողջ գեղեցկությամբ: Քայլական բերդերը, սակայն, այսօր լրված են, ամայի, ավեր...

HISTORICAL ARMENIA once had fortresses numbering in the thousands. Therefore, Armenia is not only a country of stones; it is also a world of stone citadels.

Yes, in a country of this type, quite naturally, struggle for existence and natural selection would result in the development of powerful defenses. If the high mountains and chasms did not provide enough protection, defensive walls were built in the form of fortresses and fortified monasteries. Each Armenian village, town or city had its mighty fortified walls. A careful observer will also note that ancient Armenian monasteries are very much like fortresses, built in unassailable high places, protected by natural mountains and deep crevices and featuring inaccessible walled hide-outs.

Prominent in many European countries are numerous fortresses and castles, preserved since Roman or Medieval times, maintaining their former glory and splendor. Comparable Armenian strongholds however are abandoned, deserted and crumbling. Under each heap of ruins though, there are centuries of history, the history of struggle by distinguished sons of Armenia, of the heroic deeds of the Armenian people, of

Ամրություն

Հարյուրամյակների պատմություն ունեցող բերդերը ժամանակագրորեն բաժանվում են հետևյալ խմբերի:

- 1 Ամսապատմական կիկլոպյան ամրոցներ՝ շինված առանց շաղախի, հսկա ու անտաշ քարերից (Շենգավիթ, Այրում, Քաղսի),
- 2 Ուրարտական շրջանի բերդեր (Վանի, Էրեբունու բերդեր և այլն),
- 3 Իելլենիստական, օրինակ Գառնու ամրոցը,
- 4 Արշակունյաց թագավորության ժամանակների և միջնադարյան բերդեր, որոնք կարելի է խմբավորել ըստ պատմական Հայաստանի նահանգների (Բարձր Հայքի, Վան-Վասպուրականի, Սյունյաց աշխարհի բերդերը, այդ շարքում՝ Քջին, Ամբերդը, Տիգնիսը, Սմբատարերդը և այլն):
- 5 Կիլիկիայի հայկական թագավորության հասուն միջնադարյան շրջանի բերդեր (Սմբատակլա⁷⁰, Լևոնկլա, Օծաբերդ, Վահկա, Անարզաբար և բազում այլ), որոնք իրենց ամրաշինական բարձր ճակարդակով ներշնչման աղբյուր են հանդիսանում բյուզանդական և Եվրոպական բազմաթիվ ամրոցների համար:

Fortresses

The many centuries-old fortresses can be chronologically divided into several groups.

- 1 Prehistoric cyclopean fortresses built with no mortar, of giant rough stones (i.e. Shengavit, Ayrum, Kaghisi)
- 2 Urartian fortresses (i.e. Van, Erebuni),
- 3 Hellenistic fortresses (i.e. Garni fortress)
- 4 Fortresses of the Arsacids and the Medieval period, which can be grouped with regard to the historical provinces of Armenia (i.e. Highland Hayk, fortresses of Van and Vaspurakan, Syunik region, including Bjni, Amberd, Tignis, Smbataberd).
- 5 Medieval fortresses of the Armenian Kingdom of Cilicia (Smbatakla,⁷⁰ Levonkla, Otsaberd, Vahka, Anarzaba and many others), whose high level of building skill was a source of inspiration to the Byzantine and European fortress builders.



PHOTO BY RAFFI KOJAN

Գառնի տաճարը և
VII-ի եկեղեցու
ավերակները

Garni Temple and
ruins from a 7th
century church



PHOTO BY MAX SIVASLIAN

Երկնակարկան
Կաքավաբերդ

Imperial
Gakavapert




PHOTO BY HRACHIA GHAZARYAN



PHOTO BY RAFFI KOJAN

Այսօր կանգուն են միայն բերդի պատերը, որոնց շարվածքն իրականացված է սեպած մշակված անտաշ և սրբատաշ պաղատն քարերով և կրաշաղախով:

Today, only the walls of this great fortress have remained. These walls are built with a mix of refined and rough basalt stones.

Բայց յուրաքանչյուր ավերակի տակ
դարավոր պատմություն կա,
մաքառող և շինարար հայ ժողովրդի
հերոսամարտերի, իշխանական
սիրանքների, դաժան
պաշարումների ու քաջազուն
հայորդների պայքարի
պատմությունը: Իշխանների ու
ժողովրդի ազատ ապրելու անսպաս
մղումն է պայմանավորել
կառուցելու բազմաթիվ
բերդամրոցներ ու
բերդաքաղաքներ: Դայաստանում
բերդեր կառուցվել են պատմական
բոլոր ժամանակներում: Ամրոցները
շինվել են երկրի ռազմավարական
և հաղորդակցման կարևոր ուղիների
վրա: Դրանք զբաղեցրել են
կենսական նշանակության
բարձունքներ, թշնամիների
հարձակումների ժամանակ
հանդիսացել դիմադրության
հենակետեր: Այսպիսով, ամրոցներն
ունեցել են երկու հիմնական

the fierce sieges and of the princely exploits. The insatiable drive of the princes and the people for freedom precipitated the construction of numerous strongholds and fortified cities. The construction of strongholds in Armenia was constantly ongoing. Fortresses were built both on strategic roads and routes of communication. They occupied vitally important heights, and at times of invasions they became pockets of resistance. Thus, the fortresses had two basic functions, as fortifications and as dwellings.

The Center of Historical Syunik in the 10th century was the town of Yeghegis.⁷¹ To the east of Yeghegis, on a sheer unscaleable cape jutting out between two gorges rests Smbataberd, which is also known as Tsakhatskari Berd. Ghevond Alishan wrote that the



PHOTO BY KAREN MIRZOYAN

Ամրոցն ունի մեկ ընդհանուր պատ, որն այն բաժանում է Երկու՝ հյուսիսային ու հարավային մասերի: Երկու հատվածներում էլ կան ներքին միջնաբերդեր:

The fortress has one main wall that divides the space in two sections, northern and southern divisions. In each of these sections there are secondary fortresses.

գործառույթներ՝ ռազմավարական և բնակելի:

Պատմական Սյունիքի կենտրոնը
X դարում Եղեգին⁷¹ քաղաքավանն
էր, որից դեպի արևելք՝ Երկու
ձորակների միջև գտնվող
դմվարամատչելի բարձունքին,
արծվի պես թառել է Սմբատաբերդը,
որը հայտնի է նաև Ցախաց քարի
կամ Ցաղաց քարի բերդ
անվանմամբ: Ղ. Ալիշանը գրում է, որ
քաղաքը և բերդը ունեցել են նույն՝
Սմբատաբերդ կամ Ցախաց քար
անվանումը⁷² և մինչև VII դարի
առաջին քառորդը պատկանել են
Սյունյաց իշխաններին, ապա X
դարում անցել Բագրատունի
արքայատոհմին, իսկ XIII դարում
Չաքարյանների կողմից
ճվիրաբերվել են Օրբեյան
իշխաններին և մինչև XV դարը եղել
նրանց արռանիստը: 1605թ.
քաղաքը և բերդը հիմնովին
ավերվել և մարդաբախվել են

city and the fortress had the same name of either Smbataberd or Tsakhatskar,⁷² and up to the early 7th century belonged to the Princes of Syunik, then in the 10th century passed to the Royal House of Bagratuni, and in the 13th century was presented by the Zakarians to the Orbelian Princes, remaining their princely seat until the 15th century. In 1605, the city and the citadel was basically ruined and depopulated as a result of Shah Abbas and the Turko-Persian wars.⁷³ Bishop Sarkis Jalalian, describing the fortress in his travel book, wrote that Tsakhatskar was a green city with sweet water and healthy air, and Smbataberd, which was built in its southern suburb, was an unassailable fortress within the city, erected in a gorge, surrounded by high mountains, with abundantly flowing



{ ...պյատես, որտես բարօք
լեռներն ու անդամական
զյւս օդին ուշտուածուա,
սառութպում էրն բերդեր և
վասքեր՝ իբրև լաւորն
ուաստարաւաներ:



IF THE HIGH MOUNTAINS
AND CHASMS DID NOT PROVIDE
ENOUGH PROTECTION, DEFEN-
SIVE WALLS WERE BUILT IN
THE FORM OF FORTRESSES
AND FORTIFIED MONASTERIES.

Շահարասի, ապա թուրք-պարսկական պատերազմների արդյունքում⁷³: Սարգիս Եախսկոպոս Զալալեանն իր ճանապարհորդությունների գրքում նկարագրում է բերդը՝ գրելով, որ Յախաց քարը եղել է առողջարար օդով, բարեհամ ջրով սիզավետ մի ամբողջ քաղաք, որի հյուսիսային կողմում կառուցված Սմբատաբերդը հանդիսացել է քաղաքի անարիկ միջնաբերդը՝ գետեղված ձորամիջում, շրջապատված բարձրակատար լեռներով, ուր հորդառատ խոխոցացել են անուշահամ առուները⁷⁴: Այսօր կանգուն են միայն բերդի պատերը, որոնց շարվածքն իրականացված է սեպածն մշակված անտաշ և սրբատաշ քազալտե քարերով և կրաշաղախով: Բերդի հատակագիծը պայմանավորված է տեղանքի ձևով և ռելիեֆի առանձնահատկություններով: Ամրոցն ունեցել է երեք դուռ, գլխավոր մուտքը եղել է հյուսիսային կողմից:

Յուսիսային և արևելյան մուտքերն անցնում են թաղածածկ սրահներով, որոնց տանիքներին ավերակ վիճակում պահպանվել են դիտանոցները և պահակատները: Արևելյան և հարավային կողմներից ամրոցը եղերում են եղեգիսի, արևմտյան կողմից՝ Արտարունի ծորերը, իսկ հյուսիսում ծավալվում է լեռնաշղթամ: Բոլոր կողմերից բերդն ամրացված է բրզածն պարիսապներով: Ամրոցն ունի մեկ ընդհանուր պատ, որն այն քաժանում է երկու՝ հյուսիսային ու հարավային մասերի: Երկու հատվածներում էլ կան ներքին միջնաբերդեր:

Սմբատաբերդը լիարժեքորեն ներկայացնում է «միջնադարյան ամրոցի» իսկական կերպարը. ա) այն իր դիրքով պահով է եղել թշնամիների հարձակումներից, բ) միայն պատերի շարվածքից զգացվում է, որ ունեցել է ներկայացուցչական, պատկառելի հորինվածք, ինչը ահ ու անզորություն է ներշնչել այն գրավել հանդգնողներին, գ) ամրոցի տեղադրությունը, ինչպես նաև քարձը պարիսապները, աշտարակ-դիտանոցները բերդապահներին ընձեռել են շրջակա ձորահովտիսներն ու գյուղերը լավագույնս դիտարկելու հնարավորություն, դ) ունեցել է ջրամատակարարման աղբյուր՝ իբրև պաշարումների ժամանակ գոյատևել կարողանալու պարտադիր պայման: Տեղում պահպանվել են բնակելի շինությունների ավերակները և ջրավազանների մնացորդները: Զուրն ամրոց են հասցրել մոտակա

sweet-tasting and gurgling brooks.⁷⁴ Standing today are only the walls of the fortress, built of wedge-shaped basalt stones and mortar. The base of the fortress is formed by the actual cliffs it rests on. The fortress had three doors, with the main entrance on the north. The northern and eastern entrances passed through vaulted halls, with watchtowers partially preserved on their roofs. On the east and the south the fortress borders on the gorge of Yeghegis, to the west is Artabuni gorge and on the south it is simply mountains. Smbataberd is fortified by a pyramid-shaped enclosure on all sides. The fortress has one common wall, dividing it into two parts, the southern and the northern part. The two parts contain interior strongholds.

Smbataberd is a true specimen of a medieval fortress. a) It was secure against hostile attack by virtue

of its geography, b) by the appearance of the walls it is clear that the fortress had a solid structure and appearance, causing potential aggressors to fill with awe and dismay, c) the fortress' position, high enclosure, and watch towers enabled the defenders to observe the surrounding terrain and villages to their best possible advantage, d) the fortress had logistical support, to secure its survival in an emergency. The remnants of dwellings and water reservoirs have been found, with the water supplied to the fortress by a pipeline from the nearest wells. The marks of the pipes can be seen by the side of the road, where the cape juts out from the mountain chain.

Alishan believes that the history of the fortress is associated with the struggle by Smbat I Bagratuni (890 – 914) against the Arab Yusuf, the amir of Arropatene,⁷⁵ because in the 10th century the principal target of Arab assaults was the gorge of Yeghegis. Today, on the way to Zorats church, one may stumble upon a magnificent *khachkar* which determines the location of King Smbat and his faction's graves. Yeghiazarian in turn wrote that the fortress is named after Prince Smbat of Syunik.⁷⁶ Narator Asoghik attests however that Smbataberd was built "by the hands of Stepanos' father."⁷⁷ At the time of Mongol invasions in Syunik in the 13th century, Prince Orbelian was a prominent political figure. He held negotia-

ՄԻՋԱՆ ՊԱՏԵՐԻ
ՀԱՐՎԱԾՔԻ ԶԳԱՅՎՈՒՄ
Է, ՈՐ ՈՒՆԵՑԵԼ Է
ԱԵՐԿԱՎԱԾՈՒԹՅՈՎԱԿԱՆ,
ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀՈՐԻԱՎԱԾՔ,
ԻՆՉՈ ԱՀ ՈՒ
ԱՇՈՐԻՒԹՅՈՒՆ Է
ԱԵՐԸՆՈՒ ՎԱՆ ԳՐԱՎԵԼ
ՀԱՆԴԳԱՄՈՒՆԵՐԻՆ

աղբյուրներից բերված ջրմուղով, որի հետքերը նկատելի են ճանապարհի եզրին՝ լեռնաշղթայի պարանոցի հատվածում:

Ալիշանը Ենթադրում է, որ բերդի պատմությունը կապված է Եղել Աստրատականի առաք ամիրա Յուսուֆի դեմ Սմբատ և Բագրատունու (890-914 թթ.) պայքարի հետ⁷⁵, քանի որ X դարում արաբների հարձակումների գլխավոր թիրախը Եղեզաց ծորն էր: Այսօր Եղեզիս գյուղից դեպի Զորաց Եկեղեցի տաճող ճանապարհին կա շրեն կամարակապ մի խաչքար, որը մատնանշում է Սմբատ արքայի և նրա գինակիցների գերեզմանավայրը: Յ. Եղիազարյանը գրում է, թե ավելի հավանական է, որ բերդը կոչվելիս լինի Սյունյաց Սմբատ իշխանի անունը⁷⁶: Ասողիկ պատմիչը վկայում է սակայն, որ Սմբատաբերդը շինվել է «ի ձեռն հօրն Ստեփանոսի»⁷⁷:

Սյունիքի վրա մոնղոլական արշավանքների ժամանակ՝ XIII դարում, հեղինակավոր քաղաքական գործից է Եղել Սմբատ Օրբեյան իշխանը: Նա բազմից զգալի հաջողություններով բանակցել է մոնղոլների հետ՝ վայելելով Մանգու խանի բարեհաճությունը: Սմբատ իշխանը մոնղոլներից ստացել է լայն արտօնություններ ու գավառներ: Նրա շնորհիվ Սյունիքը ապել է համենատարար խաղաղ պայմաններում, զարկ է տրվել շինարարությանը և մշակույթին: Հայոց և վրաց սպառապետ-իշխանի կոչում վաստակած Սմբատ Օրբեյանի վարչական կենտրոնը Եղեզաց ծորն էր, միգուցե նաև Սմբատաբերդը, որն Օրբեյանները ընդարձակել են և ամրացրել: 1331թ. դրությամբ Տաթեկի վաճքի ու Նորավանքի կողքին Սմբատաբերդը հիշատակվում է որպես ծաղկուն ամրոց⁷⁸: Սմբատը զավակ չի ունեցել, և որդեգրել է իր կոտսեր Եղեզի Տաթեկի Տաթեկ որդիներից մեկին՝ Ստեփանոսին, որը հետո դարձել է Սյունյաց թեմի եպիսկոպոսը⁷⁹: Ելելով Ասողիկ պատմիչի վկայությունից, բերդն իր անվանումը կարող էր ստանալ ավելի շուտ Սմբատ Օրբեյան իշխանին պատկանելու համար: Պատմությունը վկայում է, որ Սմբատը քազավորական շուրջով թաղվել է Վայոց Զորի Ամաղու Նորավանքում: Ցավոք, մեր պատմագիրները հայկական բերդերի պատմության ու տարեգրության վերաբերյալ կցկուուր տեղեկություններ են հաղորդում, և այսօր էլ հստակ չէ, թե որ Սմբատի անվանը է կոչվում բերդը:

Սակայն Սմբատաբերդի Երբեմնի փառքն ու գորությունը պատկերացնելու համար բավական են նաև ամրոցի բնորոշման Ստեփանոս Օրբեյանի խոսքերը, որը բերդը կոչում է «բարձրահոչակ և սուրբ առարինարան»⁸⁰: 

tions with the Mongols many times, enjoying the favor of Mangu Khan. Prince Smbat received from the Mongols extensive benefits and lands. Due to him, Syunik had a comparatively peaceful life, undergoing a period of development and culture. Smbat Orbelian had merited the titles of both Armenian and Georgian Prince and Troop Commander, and his governance center was Yeghegis gorge, and perhaps more specifically Smbataberd, which he expanded and fortified. In 1331, Smbataberd, located near Tatev and Noravank, was mentioned as a blossoming fortress.⁷⁸ Smbat had no children, so he adopted Stepanos, one of the three sons of his younger brother Tarsaij, who later became bishop of Syunik diocese.⁷⁹ According to evidence by narrator Asoghik, the fortress could have more likely been named after Smbat Orbelian, who owned it. History tells us that Smbat was given a royal funeral at Amaghu's Noravank monastery in Vayots Dzor. Unfortunately, our historians recorded very little information about Armenian fortresses. And even today it is unclear as to which Smbat was the fortress named after.


Stepanos Orbelian called the fortress "a place of grand and sacred righteousness".⁸⁰ A visit to this site will reveal Smbataberd's might and former glory. 


Երկու ծորակների միջև գտնվող դժվարամատչելի բարձունքին արձվի պես բառել է Սմբատաբերդը, որը հայտնի է նաև Ցախար բարի կամ Ցախար բարի բերդ անվանմամբ

To the east of Yeghegис, on a sheer unscaleable cape jutting out between two gorges rests Smbataberd, which is also known as Tsakhatskari Berd.



PHOTO BY RAFFI KOJIAN





«Խնձօրեսկ»

{ Khndzoresk }



Սյունիքաթ Զորակոր Աղաստարան Խնձորեսկ


Old Khndzoresk, the Mighty Safe Haven of Syunik


Որիս քաղաքից 15 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակարդակից 1580մ բարձրությամբ, Զանգեզուրյան բնության մեկ այլ հրաշալիքն է պատմաբարաննավային հին Խնձորեսկը:

Դայտմվելով զառիթափ լանջերի և հարյուրավոր բրգաձև քարատակերի աշխարհում՝ ականայից հիմնում ես, թե որքան խորագետ և հրաշալի է հայոց բնությունը, որ իր զավակներին պաշտպանելու և ապաստանելու համար արարել է ժայռամնիք նման բնակավայրեր: Փիսրուն ապարներից «Ճարտարապետ» քամին կերտել է քարակոփ, հուսալի անձավներ, որոնք ձգվում են մոտ երեք կմ և ընկած են միջինը 100-120մ բարձրությամբ լանջերի միջև: Յետագայում բնակիչներին մնում էր միայն մշակել բնության ստեղծած հարյուրավոր բնական քարանձավները: Մարդիկ ժայռերի մեջ բացել են դրներ և երդիկներ, որոշ քարատակերի պատերը հարթեցրել և հղկել կավով: Յուրաքանչյուր կացարան միջանցքով քաժանվել է երկու մասի, մեկում բնակվել են մարդիկ, մյուսում՝ ընտանի-կենդանիները (սոուն և գոմ): Տեղանքն անհարմար էր շինարարական աշխատանքների համար, հետևաբար մարդիկ կառուցել են լանջերն վեր ձգվող գետնից 20-30 մետր բարձրության

THE INACCESSIBLE OLD cave town of Khndzoresk, a natural wonder of Zangezur, is situated fifteen kilometers northeast of Goris, at an elevation of 1,580 meters above sea level. When observing this world of steep slopes and hundreds of cone-shaped rocks, one immediately fills with admiration: how wise and miraculous Armenian nature is to have built up such rocky towns to safeguard and harbor its progeny. Out of fragile rocks, the wind sculpted solid stone shelters stretching for about three kilometers along 100-120 meter high slopes. The inhabitants only had to fine tune these innumerable natural caves. By pouring hot water on the rock they made it softer for hacking doors and ventilation holes in the stone, smoothing the walls and covering them with clay. A corridor divides each shelter into two chambers, one for humans, the other one for domestic animals (house and barn). The terrain was not convenient for construction hence people erected 20-30 meter high terraces on which collective shelters were built so that the roof of one served as the yard for another. Rope ladders tied to first floor entrances were used to climb multi-story rock shelters. Men and women climbed from one

{ ...քրիստոնեական Հավատքին դարձած
բնակչությունը կառութում է ևս
երեք եկեղեցիներ՝ սր. Թաղւան Ժայռափոր
տաճուհը, Անգղատի եկեղեցին և Խնջորեսկ
գետի ջախ լգի Հավագոյին, պյուր արուեն և Վերան
Տաճարը, որ կոշվում է Հրա:





LATER, THE FULLY CHRISTIANIZED PEOPLE
BUILT THREE MORE CHURCHES, THE CAVE CHAPEL
OF ST. THADDEUS, THE ANAPATI (OF DESERT)
CHURCH, AND THE OLDEST CHURCH ON THE
LEFT BANK OF THE RIVER KHNDZORESK REFERRED
TO AS THE OLD ONE, WHICH IS NOW RUINED.

դարավանդներ, որոնց վրա դասավորված խմբային կացարաններից մեկի տաճիքը մյուսի քակն էր: Քազմահարկ քարատակերով տեղափոխվելու համար օգտագործել են պարանագործ սանդուղքներ, որոնց ծայրերը կապել են առաջին հարկերի կացարանների մուտքերից: Անձուկ ժամապարհներով և վտանգավոր կաշեփոկ-պարաններով քարատակերի մի հարկից մյուսն էին բարձրանում նույնիսկ կանայք՝ մեջքներին կապելով ծանր զամբյուղներ, ջրով լի սափորներ և փորիկ երեխաններին:

Կացարանների լուսավորությունը միայն մուտքի բացվածքից էր, քանի որ անձավները չէին կարող ունենալ պատուհաններ: Քարատակերում այսօր կարելի է տեսնել փորված քարե նստարաններ, ամբարներ, դարակներ, կացարանների հատակներին՝ ուղղանկյուն ջրհավաք փոսեր, իսկ գոմերում՝ անասնակերի մսուրներ: Համեմատաբար հարթ են կենտրոնական հատվածի քաղամասերը: Ենթադրվում է, որ բնակվայրային մշակումներն այսուղի արվել են XIV-XV դարերում:

Թե երբվանից են խնձորեսկում մարդիկ բնակություն հաստատել, հայտնի չէ: Սակայն գյուղում հաստատագրվել է «սահիտակ ժայռ» կոչվող հեթանոսական մեհյանը՝ ծիսակատարությունների հետքերով, հետևաբար նշանակում է, որ խնձորեսկում մարդիկ ապրել են դեռևս հեթանոսական ժամանակներից⁸¹: Պատմիչները վկայում են, որ քրիստոնեության մուտքը խնձորեսկ եղել է մեծ դժվարություններով⁸², քանի որ այնտեղ և, արհասարակ, ողջ Սյունիքում միշտ է ուժեղ են եղել հեթանոսական ավանդույթները: Տեղացիների մոտ աղոթելն ու մկրտությունն ընդունված չի եղել: Միայն 1665թ. գյուղում կառուցվել է սր. Յոհանիսի եկեղեցին, որը ենթարկվել է Տարևի միաբանությանը: Ապա քրիստոնեական հավատքին դարձած բնակչությունը կառուցում է և երեք եկեղեցիներ՝ սր. Թադևոս ժայռափառ մատուռը, Անապատի եկեղեցին և խնձորեսկ գետի ձախ ափի հնագույն, այսօր արդեն ավերակ տաճարը, որ կոչվում է Քին:

Ժողովրդական գեղեցիկ ավանդություն կա խնձորեսկի հիմնադիրների մասին: Եղել են երկու որսորդ եղբայրներ՝ պարսկահայատակ հայեր Ասուան և Թավարը, որոնք որսի ժամանակ հետապնդելով եղինիկին՝ հասել են խնձորեսկ, տեսել վայրի

**Բաշտարու քարատակերով
ՏԵՂԱՓՈԽՎԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՕԳՏԱՎՈՐԾԵԼ ԵԱ
ՊԱՐԱՎԱԳՈՐԾ
ՍԱՆԴՈՒՐԺԱՆԵՐ, ՈՐՈՆՅ
ԾԱՐԵՐԸ ԿԱՊԵԼ ԵԱ
ՎՈՎԶԻՆ ՀԱՐԿԵՐԻ
ԿԱՅՁԱՐԱՆԱՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻՒՅ:**

floor to another using narrow and precarious passageways and leather-strip ropes carrying heavy baskets, water jugs and babies fastened to their back. The dwellings could be lit only through doorways since the caves could have no windows. Today, one can still find benches, storage nooks, shelves, rectangular water pits and feeding racks carved in stone. The central districts are relatively level. It is believed

that larger-scale development of this town began in the 14th –15th centuries.

It is not known exactly when the first people settled in the gorge now known as Khndzoresk, however a pagan shrine bearing ritual traces and referred to as the White Cliff was found in the village. Therefore, people have lived in Khndzoresk at least since pagan times.⁸¹ According to historians, the advent of Christianity in Khndzoresk faced great

difficulties⁸² since here and in the whole of Syunik province pagan traditions were strong. The locals were not accustomed to prayer and baptism. Only in 1665 was the St. Hripsime church built in the village. Later, the fully Christianized people built three more churches, the cave chapel of St. Thaddeus, the Anapati church, and the oldest church on the left bank of the river Khndzoresk referred to as the Old One, which is now ruined.

There is a traditional story related to the foundation of Khndzoresk. There were once two hunter brothers, Armenian subjects of Persia, Asua and Tavar. In pursuit of a deer, the brothers reached Khndzoresk, and upon seeing the inaccessibility and the advantages of the place, decided to establish a village and to resettle here—thus getting rid of the cruel Persian tax collectors. Later on, numerous residents who suffered from Persian taxes followed suit and emigrated to Khndzoresk from the Persian province of Atrpatakan. The deep, forested Khndzoresk gorge was indeed the best hideout from oppression and for survival. When one looks at the deep gorge it is not clear where the dwellings begin and end.

The people of Old Khndzoresk hunted, practiced stockbreeding, agriculture and various crafts. The bards and singers of Khndzoresk were quite famous

անմատչելիությունն ու հարմարավետությունը և որոշել են բնակավայր իհմնել և վերաբնակվել այնտեղ՝ այդպիսով ազատվելով պարսից դաժան հարկահանությունից: Ապա, նրանց օրինակով Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Աստրապատական գավառից այստեղ են տեղափոխվում բազում բնակիչներ, որոնք պարսկական ծանր հարկահանության զոհերն էին: Խնձորեսկի անտառապատ խոր ծորն իրոք լավագույն թաքսոնց էր դաժան հարկերից ազատվելու և նարդկային գոյությունը շարունակելու համար: Դին Խնձորեսկի քարատակերի առաջին բնակիչները նախնադարյան մարդու պես զբաղվում էին որսորդությամբ, անասնապահությամբ, հողագործությամբ, ամենատարբեր արհեստներով: Թավրիզում մեծ հռչակ են վայելել հատկապես Խնձորեսկի աշուղգուսանները: Աբրահամ Կրետացին հիշատակում է նաև, որ Խնձորեսկում շատերն են գործ և կարպետ գործել⁸³: Ժամանակի ընթացքում հուսալի ապաստարանի բնակչության թիվը կտրուկ աճում է, քանի որ մարդիկ, լսելով որ Խնձորեսկում հարկեր չեն վճարում, հոգ բազմությամբ եկել և վերաբնակվել են այստեղ:

Դին Խնձորեսկը բազմաբնակ քարանձավային քաղաք էր մինչև 1958թ: Արդյունաբերական

in Tabriz. Over time, the population of this reliable refuge had grown dramatically as rumors spread that Khndzoresk did not pay taxes, and immigrants came here to settle in multitudes.⁸³ Old Khndzoresk was a heavily populated cave town until 1958. Owing to Armenia's industrialization, the population started to leave the cave dwellings in search of jobs in centers of industry. The last residents of Old Khndzoresk left in 1969. In the 1950s, the village of New Khndzoresk⁸⁴ was founded on the plain just above Old Khndzoresk. Water pipes were laid, and apartment buildings were built. What induced Armenians to get so attached to these cave homes so isolated from the outer world, and to lead a nearly prehistoric way of life until the 1970s? Perhaps they felt the compelling instinct of self-defense, or else the inclination to be an integral part of nature?

Today, the ancient caves have become a ghost town, but when one enters some caves it seems the owners left for a moment and are about to come back soon.

In Armenian history, the years of 1722-1730 were marked by liberation revolts in Syunik and Artsakh

Խորունկ ծորին նայելիս անհասկանալի է, թե որտեղ են սկսվում և որտեղ վերջանում կացարանները:


Gazing through the depths of Old Khndzoresk.



PHOTO BY ARSINEH KHACHIKIAN

ԾԱԼԿԵԼԻ ՉՈՐ

Խնձորեսկը ժողովողի կողմից
անվանվել է նաև «Շակերի ծոր», իսկ
«Խնձորեսկ» անվան ստուգաբանման
մի քանի տարբերակներ կան:
Դամաձայն դրանցից մեկի՝ այդ
տարածքում աճել են մշտապես առատ
բերք տվող բազմաթիվ խնձորենիներ:
Անվանումը բացատրվում է խոր-ծոր
բառերով, որոնք հետագայում
հնչյունափոխվել են խործորեսկ-
խնձորեսկ ձևով: 1735թ, երբ Արքահամ
Կրետացի կարողիկոսը Մուղանի
դաշտավայրով, Գորիսի, Տաթևի վանքի
կողմից Պարսկաստամից վերադարձել
է Էջմիածին, նրա ճանապարհն
անցնելիս է եղել Խնձորեսկով, որտեղ
կարողիկոսը կանգ է առել, հնայվել ու
զարմացել մարդկանց ապրուստի
պայմաններով և իր «Պատմության» մեջ
հանգամանորեն նկարագրել է
բնակավայրը՝ փաստելով, որ
կենտրոնացուղ Խնձորեսկուն այդ
ժամանակ ապրել է 800 ծուխս
(ընտանիք), որը մեծ թիվ է գյուղական
բնակչության համար⁸⁴: Հետևաբար
Խնձորեսկը հարուստ և մարդաշատ
բնակատեղի է եղել: Սյունյաց նահանգի
ամենամեծ բնակավայրը և կենտրոնը
եղել է Հարանդ գավառը: Հարանդի
ամենակենտրոնը Վրևեյան
Դայաստանի ամենամեծ գյուղը՝ Դին
Խնձորեսկը էր, որի համար էլ վերջինս
անվանվել է ճիշտ այնպես, ինչպես
աչքի կենտրոնը՝ խնձորակը: Սա էլ
քարանձավային քաղաքի անվանման
մեկ այլ բացատրությունն է:



Կանայք աղբյուրի մոտ, 1934 թ.
Women near a mountain spring, 1934




Անձավներ բրզան ժայռում, 1934 թ.
Caves in pyramid-shaped rocks, 1934

Gorge of Hollows

The people also referred to Khndzoresk as the Gorge of Hollows. The word "khndzor-esk" has several explanations, one of which is the meaning abundant apple orchard ("khndzor" is the Armenian for apple). The other explanation involves the words khor-dzor (or deep gorge), which later evolved into "khordzoresh-khndzoresh." Yet another explanation refers to a story that took place in 1735, as Catholicos Abraham Kretatsi (Abraham of Crete) returned from the coronation of the Shah of Persia via Mughni valley, Goris and Tatev monastery to Echmiadzin, he made a stop-over in

Khndzoresk and was enchanted and fascinated by the living conditions of the villagers. In his "History" he described the village in detail as a settlement populated by 800 households (families), which was a sizable number at that time for a rural community.⁸⁵ Thus Khndzoresk used to be a rich and populous town. The largest town and center in Syunik province was Haband and its largest central village was Old Khndzoresk, the biggest one in Eastern Armenia. Another explanation is the village was named Khndzoresk in reference to the apple of the eye.

{ ...առշասարկ, ողջ Այոհաքոյց
միւս էլ ուժեղ եւ եղել
չեթանոսական պատույթները:
Տեղաթրեւոր առ առութելն
ու մկրտություր ընդուհած
օր եղել...



...IN THE WHOLE OF
SYUNIK PROVINCE, PAGAN
TRADITIONS WERE STRONG.
THE LOCALS WERE NOT
ACCUSTOMED TO PRAYER
AND BAPTISM...



PHOTO BY RAFFI KOJAN

հարաբերությունների կտրով զարգացման արդյունքում սկսվում է բնակչության արտահոսքը դեպի արդյունաբերական կենտրոններ: Քարատակերն աստիճանաբար մարդաթափ են լինում և ամայանում: Դին Խնձորեսկի քարանձավներից վերջին բնակիչները հեռացան 1969թ.:

1950-ականներից սկսվում է Նոր Խնձորեսկ⁸⁵ գյուղի շինարարությունը, անցկացվում են ջրատարներ, կառուցվում են բնակարանային շենքեր: Իսկ ի՞նչն էր ստիպում հայերին այդքան ամուր կապվել արտաքին աշխարհից կտրված իրենց ծորանմիով կացարաններին և մինչև 1950-70-ականները որդեգործ գրեթե նախնադարյան մարդկանց բնորոշ կացութածն: Գուցե հարկադիր ինքնապաշտպանության բնազդը, անմատչելի բնակարանների հուսալիությունը, իսկ միգուցե բնության հետ ծուլվելու ու մշտական նրա անբաժանելի մասնիկը լինելու ձգտումը:

Այսօր արդեն հազարամյա քարատակերը վերածվել են մեռյալ քաղաքի, բայց որոշ կացարաններ մտնելիս, բվում է, թե նրա տեղերը մի պահ միայն դուրս են եկել բնակարանից և ուր որ է կվերադառնան:

Խնձորեսկը XVIII դարի 20-30-ական թթ. Սյունյաց ազգային-ազատագրական պայքարի պատմության նվիրական վայրերից է: Խնձորեսկի ամեն մի վայր ունի անվանում, որը կապվում է այդ ժամանակաշրջանի հերոսամարտերի պատմությանը: Օրինակ, գյուղի վերին հատվածը կոչվում է Փոքրոս: Եթե թուրքական համայիլ խանի գործերը ներխուժել են Խնձորեսկ, ջարդել բնակիչներին, այդ ժամանակ, ինչպես տեղաբնիկներն են պատմում, մեծ փրթոց է եղել (փրթոս բառում ց տառը փոխվել է ս-ի) այդ վայրում, քանի որ խիզախ խնձորեսկցիները հերոսական ինքնապաշտպանական

(Karabakh) against the ruthless Persian-Turkish rulers. Every spot in Khndzoresk has a name related to the history of the heroic struggle. For example, the upper-village district is called Prtos, which stands for "hacking": when the Turkish troops of Ismail Khan invaded Khndzoresk and massacred the villagers, according to the local lore, many were hacked to death because the courageous defenders of Khndzoresk fought to the last man.

The Khndzoresk fort has an interesting history and contributed to the liberation struggle as the stronghold of David Bek and Mkhitar Sparapet. The national hero, David Bek initiated and headed the liberation of Syunik. After Bek's death in 1728 Mkhitar Sparapet, renowned for his strategic skills, valiance and sharp-witted individuality, was elected to be the leader of the liberation struggle. He succeeded in continuing the liberation combat for two more years, however, his forces were outnumbered by the enemy and his entreaties sent to the Russian court remained unanswered. The demoralized Armenian forces split in two, one group led by general Ter-Avetis who was inclined to negotiate and reconcile with the enemy, the other, smaller force of Mkhitar Sparapet was ready to fight for freedom to the end. Mkhitar Sparapet failed to come to common terms with Ter-Avetis and departed to Khndzoresk. The Turks demanded surrender, and assured Ter-Avetis that they would not seek vengeance, so the latter surrendered Halidzor fortress to the enemy, who violated their oath and massacred all its residents. Shocked, Ter-Avetis left Armenia for Jerusalem for repentance. A group of Khndzoresk residents



մարտեր են մնել մինչև վերջին
ռազմիկը:

1722-1730թթ հայոց պատմության
մեջ նշանավորվում են Սյունիքի և
Արցախի ազատագրական
պայքարով՝ ընդդեմ պարսկա-
թուրքական դաժան տիրապետու-
թյան: Մարտերում իր հետաքրքիր
պատմությունն ու կարևոր
դերակատարումն ունի Խնձօրեսկի
բերդ՝ որպես Դավիթ Բեկի և
Միհրար Սպարապետի մաքանան
ամուր ամրոց: Սյունյաց ազատա-
մարտին սկիզբ որեց և այն
գլխավորեց ազգային հերոս Դավիթ
Բեկը, որի մասին հետո (1728թ.)
պայքարի առաջնորդ է ընտրվում իր
ռազմավարական հմտություններով,
հերոսական խիզախումներով և Վաս
անհատականությամբ աչքի ընկանող
Միհրար Սպարապետը: Նրան
հաջողվում է ևս երկու տարի
շարունակել ազատագրական
մարտերը: Սակայն թշնամիների
նկատմամբ սեփական ուժերի

decided to commit a “patriotic crime” to gratify the Turks in order to deliver Khndzoresk from the fate of Halidzor. They treacherously murdered Mkhitar, beheaded the general and sent his head to the Turkish Pasha of Tabriz. However, the latter ordered the capture and beheading of these traitors to their own general.

The grave of Mkhitar Sparapet is under the northern wall of Old Khndzoresk church, on the left bank of the river Khndzoresk, at the place called Anapat.⁸⁶ The gallant man is carved on the tombstone on horseback. With the demise of its leaders, the struggle for Syunik’s freedom collapsed. The uprising was reduced to a small guerrilla war and Armenia’s liberation was suspended for a hundred years.

One of the lower pastures at Khndzoresk became called the

ARMENIANS HAVE
ALWAYS BEEN IN
HARMONY WITH
NATURE, AND KHND-
ZORESK IS A PERFECT
EXAMPLE...

անհավասարությունը գիտակցելով և անպատճախան մնացող մի շաբթ աղերսագրեր ուղարկելով ռուսաց արքունիք, հայոց զինվորականության շարժերում ծնվում է բարոյազրկող հուսալքությունը: Հայոց ուժերը պառակտվում են Երկու մասի՝ Տեր-Ավետիսի կողմնակիցների, որոնք հակված էին բանակցելու և հաշտություն կնքելու թուրքերի հետ, և Մխիթարի փոքրաթիվ կողմնակիցների, որոնց ուղեգիծն էր պայքար մինչև վերջ՝ ի մահ, համուն ազատության:

Դանաձայնության զգալով Տեր-Ավետիսի հետ՝ Մխիթար Սպարապետը հեռանում է Խնձորեսկ: Տեր-Ավետիսը, թուրքերց ստանալով վրեժմնդիր չլինելու երաշխիքներ, նրանց է հանձնում Յալիձորի բերդը, սակայն թշնամին երդումները դրժելով՝ նորրազերծ է անում ամրոցի բնակիչներին: Յոգեկան ծանր ցնցումից Տեր-Ավետիսը Յայաստանից հեռանում է Երուսաղեմ՝ ապաշխարելու: Թուրքերին սիրաշահելու, իրենց բնակավայրը՝ Խնձորեսկը,

Յալիձորի ճակատագրին չարժանացնելու համար, մի խումբ խնձորեսկցիներ որոշում են գնալ «հանցավոր հայրենասիրության»: Նրանք դավադրաբար սպանում են Մխիթար Սպարապետին: Սակայն Թավորիզի թուրք փաշան հրամայում է բռնել և գլխատել դավադիրներին: Խնձորեսկ գետի ծախ ափին՝ Անապատ կոչվող վայրում, Մխիթար Սպարապետի գերեզմանն է՝ Յին խնձորեսկի Ելեղեցու հյուսիսային պատի տակ⁸⁶: Տապանաքարին քանդակված է հերոս հեծյալը: Պայքարի առաջնորդների հեռացմանը հանգան Սյունիքի ազատագրական պայքարի վերջին կայծերը, ապստամբությունը վերածվեց պարտիզանական տարերային ծպտյալ պայքարի, իսկ Յայաստանի ազատագրման հարցը կրկին հետաձգվեց շուրջ հարյուր տարով:

Խնձորեսկի ներքեւի հանդերից մեկը կոչվում է Ուուսի ծոր: 1750-1752 թթ կրկին աշխուժացած ազատագրական մարտերի ժամանակ հայկական քանակին միանալու համար Սյունիք և Արցախ ուղարկված ռուսական գործերը դարանակալվում են թուրքերի կողմից: Ուուսաց գործին դաժան կոտորածից փրկում են տեղանքի առավելություններին քաջատեղակ խնձորեսկի հայերը:

Ընբռստությամբ, ազատատենչությամբ և

Russian Gorge. In 1750-1752, when the liberation struggle resumed, the Russian troops sent to join the Armenian forces in Syunik and Artsakh were ambushed here by the Turks. The Russian units were saved from a merciless carnage by the Armenians of Khndzoresk who knew the distinctive features of the terrain.

The natives of Khndzoresk were known not only for being brave but also rebellious and ingenious.

